

ՄԵՍՐՈՊ ԵՊՍ. ՆՇԱՆԵԱՆԻ ԵՒ ԹԵՌԴԻԿԻ ՓՈԽԱՆԱԿԱԾ 34 ՆԱՄԱԿՆԵՐ (1925-1928)

ՍԵՒԱՆ ՍՐԿ. ՏԷՅԻՐՄԵՆՃԵԱՆ

haygazian@gmail.com

Մեսրոպ եպս. Նշանեանի (Կ. Պոլիս, 1872-1944, Երուսաղէմ) ու Թէրդիկի (Կ. Պոլիս, 1873-1928, Փարիզ) նամակակցութեան ամենավաղ նմուշը կը պատկանի 1911ին, ամենավերջինը՝ 1928ին: Առնուազն տասնեւեօթ տարիներու վրայ երկարող այս թղթակցութիւնը ո՛չ միայն լոյս կը սփռէ հանրածանօթ *Ամէնուն տարեցոյց*ի պատրաստութեան ծալքերուն ու Ի. դարու առաջին քառորդին խմբագրի մը աշխատանքի կերպերուն վրայ, այլեւ առիթ կու տայ բացայայտելու զուտ նամակակցութեամբ ընթացած բարեկամական յարաբերութեան մը մտերմութիւնն ու անկեղծութիւնը:

Մեսրոպ եպս. Նշանեան, որ 1939ին պիտի դառնար Երուսաղէմի հայոց պատրիարքը, բժախնդրութեամբ պահած է իր առաքած ու ստացած նամակները, ըլլան անոնք ժամանակի յայտնի անձերէն թէ համեստ ազգայիններէ: Ահա իր այս բժախնդրութեան, առաւել եւս Ս. Յակոբեանց Առաքելական Աթոռի՝ առհասարակ իր երջանկայիշատակ գահակալներու ժառանգութեան նկատմամբ տածած յարատեւ յանձնառութեան կը պարտինք Թէրդիկիի հետ եղած նամակակցութեան պահպանութիւնն ու լոյս աշխարհ գալը:

Մեսրոպ եպս. Նշանեանի մեքենագրեալ նամակներուն պատճենները կազմուած ձեւով մը, չորս հատորներու մէջ կը պահուին Երուսաղէմի Կիւպէնկեան մատենադարանին մէջ՝ «Անձնական նամակներ Մեսրոպ արք. Նշանեանի» ընդհանուր խորագրով: Իսկ ստացած նամակները կը գտնենք Երուսաղէմի հայոց պատրիարքութեան արխիւատան Նշանեանի պատկանող թղթապանակներուն մէջ: Թէրդիկիի այժմ հրատարակուող նամակներուն պարագային սակայն, պէտք է բանանք փակագիծ մը:

Հանգուցեալ բանասէր, խմբագիր Արա Գալայճեան (Երուսաղէմ, 1938-2012, ԱՄՆ), որ եղած է Եղիշէ Բ. պատրիարքի (Տէրտէրեան) անձնական քարտուղարն ու *Սիոն* պաշտօնաթերթի խմբագիրը, Երուսաղէմէն Միացեալ Նահանգներ տեղափոխութեան շրջանին, թերեւս սխալմամբ, կամ՝ հրատարակչական թերաւարտ ծրագիր մը ամբողջացնելու նպատակով՝ յատուկ արտօնութեամբ, հետը տարած է նաեւ Թէրդիկիի թղթապանակը: Գալայճեանի մահէն ետք այդ նամակները հանգուցեալի այրիին կողմէ փոխանցուած են դոկտ. Վաչէ Ղազարեանին, որ նամականիին մէկ հատուածը՝ 1/14 Հոկտ. 1911-20 Դեկտ. 1926ի միջեւ եղածը, յառաջաբանով ու ծանօթագրութիւններով հրատարակած էր *Հայկազեան հայագիտական հանդէս*ի 2006ի ԻԶ. հատորին մէջ, «Թղթեայ զաւակներու հայր»ը՝ Թէրդիկի» խո-

րագրով (էջ 263-96): Յարգելի բանասէրը, որ այդ նամակներուն բնագրերը արդէն իսկ ուղարկած է Երուսաղէմ, մնացեալ նամակներուն պատճէները հրատարակութեան համար ազնուաբար տրամադրեց մեզի՝ նշելով, թէ յարմար առիթով մը, վստահելի անձի մը հետ այդ բնագրերն ալ պիտի դրկէ Երուսաղէմի հայոց վանքը: Ներկայ հրատարակութիւնը Մեսրոպ եպս. Նըշանեանի Թէոդիկին ուղղեալ պատասխաններու ընդգրկմամբ կ'ամբողջացնէ նախորդը եւ նոր նամակներով ալ կը դառնայ անոր մէկ շարունակութիւնը:

Թէոդիկի ու Մեսրոպ եպս. Նշանեանի ծանօթութիւնը կ'երթայ նախա-1911 շրջանին, երբ *Ամէնուն տարեցոյցը*ի հեղինակը լուսանկարներ փոխ առած է անկէ՝¹: Փաստ կամ վկայութիւն կը պակսի, սակայն անոնք թերեւս ծանօթութիւն մըն ալ հաստատած ըլլային Կ. Պոլսոյ մէջ, ուր 1908-10ին շուրջ երկու տարի ապրած է Մեսրոպ վարդապետ, որպէս Մատթէոս արք. Իզմիրլեան պատրիարքի Երուսաղէմի աքսորավայրէն Կ. Պոլիս ուղեւորութեան ուղեկիցն ու անձնական քարտուղարը, կարճ շրջան մըն ալ - 1911ին - երբ Մատթէոս Բ. կաթողիկոսի վախճանումէն ետք Մայր աթոռէն Պոլսոյ ճամփով կը վերադառնար Երուսաղէմ:

Յետագայ օրերուն ու տարիներուն Նշանեան պիտի ջանար միշտ գոհացնել Թէոդիկի խնդրանքները, որոնք ընդհանրապէս կը վերաբերէին Ս. Յակոբեանց մամուլէն լոյս տեսած հրատարակութիւնները ունենալուն, իր տարեցոյցերու Երուսաղէմի ու շրջակայքին մէջ ցրումին, Ս. Յակոբեանց վանքի ձեռագրատունէն կամ դիւանէն անտիպ նիւթերու կամ լուսանկարներու տրամադրումին, Եղիշէ արք. Դուրեան պատրիարքէն ինքնագիր կամ թարգմանածոյ քերթուածներ կամ յօդուածներ, նոյնիսկ իր զաւկին համար դրոշմաթուղթեր (ինք գործածած է դրոշմակ բառը) խնդրելուն եւն., ինչպէս նաեւ անձամբ իրմէ ստորագրեալ կամ անանուն յօդուածներով տարեցոյցին աշխատակցութեան:

Նշանեան Թէոդիկի ուղղեալ նամակի մը մէջ կ'ըսէ, թէ ինք «*պարզ կրօնատուր մըլն է*», որուն *համեստ գործունէութիւնը դուրս չէ ելած Երուսաղէմի վանական սեղմ շրջանակէն*»: Եթէ չհաշուենք որպէս Իզմիրլեան պատրիարքի եւ ապա կաթողիկոսի կողքին քանի մը տարի նախ Կ. Պոլիս եւ ապա Մայր աթոռ Ս. Էջմիածին գտնուած շրջանը, ինչպէս նաեւ հովուական ծառայութեան բերմամբ աստ ու անդ կատարած կարճատեւ այցելութիւնները, Նշանեան իր կեանքը անցուցած է Ս. Յակոբեանց վանքին մէջ, որպէս «անյաւակնտ, պարզ աշխատատուր մը», գործածելու համար Օշականի բառերը²: Այնուամենայնիւ Կ. Պոլսոյ *Բիւզանդիոն* օրաթերթի, *Տաճար* հան-

¹ Վաչէ Ղազարեան, «"Թղթեայ զաւակներու հայր"ը՝ Թէոդիկ», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԻԶ:2006, էջ 265:

² Յ. Օշական, «Մեսրոպ Պատրիարք Նշանեան (Հայ մատենագրութեան մէջ)», *Սիւնն*, Յուլիս-Օգոստոս-Սեպտեմբեր 1944, էջ 124:

դէսի, Մայր աթոռի *Շողակաթ* հայագիտական ժողովածուի մէջ երեւցած յօդածներէն անդին, Մեսրոպ վարդապետ իր անուան շուրջ սկսած էր հիւսել հմուտ բանասէրի համբաւը՝ 1915ի սեւ տարին Ս. Յակոբեանց տպարանէն հրատարակելով Գրիգոր վրդ. Դարանաղցիի *Ժամանակագրութիւնը*:

Թէոդիկի եւ Երուսաղէմի պատրիարքութեան յարաբերութիւնները նոր հարթակ մը կը փոխադրուին 1920ականներու սկիզբը, երբ Եղիշէ արք. Դուրեան դարձած էր պատրիարք: Արեւմտահայ միւս մտաւորականներու հետ «հալածուած միլիական սարսափէն»³ Թէոդիկ կ'ապաստանի յունական Քորֆու կղզիի Կասթուրի գիւղը: Ան սակայն միշտ կը մտածէր հեռանալ «անհրապոյր եւ հիւրամերժ» այդ վայրէն՝ եւ «նետուիլ վայր մը», ուր պիտի կարենար իր նախասիրութիւններուն համաձայն նուիրուիլ աշխատութեանց եւ օգտակար ըլլալ իր անձին ու շրջապատին⁴: Իր այս բաղձանքը դրական արձագանգի արժանացած էր Եղիշէ պատրիարքէն ու Մեսրոպ վարդապետէն, որ այդ շրջանին ստանձնած էր լուսարարապետի պաշտօնը եւ մեծ հեղինակութիւն ունէր վանքէն ներս: Արդարեւ, Երուսաղէմի Հայոց թաղը, յետեղեռնեան շրջանին, Դուրեանի պատրիարքութեան օրերէն սկսեալ, վերածուած էր արեւմտահայութեան աշխարհիկ թէ՛ հոգեւորական բեկորներու ժամադրավայրը: Յիրաւի, Բաբգէն եպս. Կիւլեսէրեան, Մկրտիչ եպս. Աղանունի, Կարապետ Գաբիկեան, Յակոբ Օշական, Շահան Պէրպէրեան, Վահան Թէքէեան եւն. մնայուն կամ այցելու բնակիչներն էին Ս. Յակոբեանց վանքին: Նշանեան նոյնիսկ գործնական թելադրութիւններ ըրած էր Թէոդիկի Երուսաղէմ մուտքը դիւրացնելու համար: «*Կը փափաքէր Երուսաղէմ գալ եւ Ս. Յակոբի հովանայն ներքեւ շարունակել իր գրական աշխատանքը իբրեւ անվեղար-վանական*», պիտի գրէր Բաբգէն եպս. Կիւլեսէրեան՝ անոր մահագրականին մէջ⁵: Դժբախտաբար սակայն երկու կողմերու այս փափաքը չ'իրականանար. Թէոդիկ Քորֆուէն ետք միջոց մըն ալ Կիպրոս մնալէ ետք, վերջնականապէս կը հաստատուի Փարիզ, ուր ալ կը կնքէ իր մահկանացուն 23 Մայիս 1928ի գիշերը, ուղեղային կաթուածի հետեւանքով:

Ներկայ նամականին աղօտ, սակայն որոշ գաղափար մը կու տայ *Ամէնուն տարեցոյցը*ի աղբիւրներուն եւ անոնց հասնելու նպատակով Թէոդիկի ի գործ դրած յամառ ջանքերուն մասին: Նշանեանի ուղղեալ նամակի մը մէջ ան կը փոխանցէ Լեւոն Բաշալեանի մէկ վկայութիւնը. «*Լ. Բաշալեան "ո՛ւր տեղերէն ալ կը գտնես ասանկ թանկագին ձեռագիրներ" ըսաւ ինձ, եւ ես իմ հպարտութեամբս չգոհացայ միայն, այլ եւ զայն Ձեզի պարտական ըլլալս ... խոստովանեցայ*»: Թէոդիկ գիտէ, որ Երուսաղէմի վանքին «դիւա-

³ Ղազարեան, էջ 272:

⁴ Անդ:

⁵ Բ. Ե., «Թէոդիկ», *Սիոն*, 7:1928, էջ 224:

նը շատ ճոխ է» ու կը փորձէ հնարաւորինս զգայացունց ու տպաւորիչ նիւթեր քաղել հոնկէ, Մեսրոպ սրբազանի միջնորդութեամբ: Ան նաեւ քաջ գիտէ յաջա ընթերցողին ստորագրութեան արժէքը եւ այս է պատճառը, որ կը հետապնդէ, աւելին՝ կը հալածէ իր նամակակիցը, որպէսզի ձեռագիր մը պոկէ Եղիշէ արք. Դուրեանէն, նոյնիսկ երբ վերջինս հիւանդութեան պատճառով անկարող է որեւէ աշխատանք կատարելու: Թէոդիկին յամառութիւնը քաղաքավարութեան դոյզն պահանջմանց իսկ նկատմամբ զանցառութիւն, նոյնիսկ երբեմն աներեսութիւն կարելի է համարել դիւրաւ, սակայն Մեսրոպ սրբազանէն իր վայելած յարգանքն ու սէրը («Իս սիրելնուդ ապացոյցը նոր չէ՛ որ պիտի տեսնեմ») կը ներշնչէ այս տոկոնութիւնը:

Վերջացնենք՝ յիշեցնելով, թէ հետեւեալ նամակները կը ներկայացուին նոյնութեամբ, առանց որեւէ միջամտութեան, որու հարկը չէ ալ եղած: Անգամ մը եւս շնորհակալութիւն կը յայտնենք դոկտ. Վաչէ Ղազարեանի, որ Թէոդիկի նամակները տրամադրած է մեզի առ ի հրատարակութիւն, եւ Երուսաղէմի Կիւլպէնկեան մատենադարանի տեսուչ հոգջ. Տ. Ներսէս վրդ. Ալոյեանի ու գրադարանավարուհի տիկին Աննա Կեօքուշեանի, որոնք նըպաստաւոր պայմաններ տրամադրեցին Մեսրոպ եպս. Նշանեանի նամականին ուսումնասիրելու շրջանին:

Ա.

Երուսաղէմ, 31 Մարտ 1925

Սիրելի Պրն. Թէոդիկ,

Ստացայ 13 Մարտ թուակիր Ձեր նամակը⁶ ու պարունակութեանը տեղեկացայ: Հանգուցեալ Կարապետ Գաբիկեանի մահէն քիչ վերջ⁷ անոր Այրի-

⁶ Այս նամակը հրատարակած է Վաչէ Ղազարեան, վերոյիշեալ «Թղթեայ զաւակներու հայր»ը՝ Թէոդիկ» հրապարակման մէջ, էջ 274-76:

⁷ «Գուժկան Սեբաստիոյ»՝ Կարապետ Գաբիկեան (ծն. 1867, Սեբաստիա) իր մահկանացուն կը կնքէ 19 Փետրուար 1925ին, Երուսաղէմ: Բանասէր, բառարանագիր: Ան հայոց տեղահանութիւնը յանդիմանաբար (Եղեռնապարտում Փոքուն հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, տպ. «Հայրենիք», Պոսթըն, 1924): Յեղասպանութենէ ետք միջոց մը Հալէպ մնալէ ետք Օգոստոս 1920ին ապաստան գտած էր Երուսաղէմ, ուր կ'ուսուցչագործէր Ժառանգաւորաց վարժարանէն ներս: Գաբիկեանի մահուան առթիւ լուսարարապետ ու Ժառանգաւորացի տեսուչ Մեսրոպ եպս. Նշանեան հետեւեալ տողերը կը գրէ Թէոդիկի. «Տարագրութեան փարիներուն կրած ֆիզիք. եւ հոգեկան փառապանքները հիմած էին զինք, ուստի չկրցաւ դէմ դնել կողափախին. իր մահը կորուստ մըն է իսկապէս Հայ Գրականութեան համար. գաւառի համեստ այլ արժէքաւոր վերջին գրագէտներէն էր. ճանչցայ զինք հոս՝ իբր պարտականութեան նուիրում ուսուցիչ մը, միաժամանակ իր բնակարանը՝ գրասեղանին գամուած աշխատող մը. իր Սեբաստիոյ Գաւառաբարբառն ու Բոյս-Բուժակը յոյժ գնահատելի երկեր են» (Թէոդիկ, *Ամէնուն փարեցոյցը 1926*, Վենետիկ, տպ. Մխիթարեան, Ս. Ղազար, էջ 727-28): Հարկ է նշել, թէ Գաբիկեանի որդին՝ Գեղամ, ընդգրկած է եկեղեցական

ին⁸ քովին բերել տուած էի ՏԱՐԵՑՈՅՑ-ները ու անոնց հաշիւը թուղթի մը վրայ նշանակուած Հանգուցեալին ձեռագրով, որ կը ներկայացնէ հետեւեալը.-

Եգ. Ղր2.

5 հատ նուէր տրուած (Ս. Պատրիարքի ⁹ , Մկրտիչ ¹⁰ , Բաբգէն ¹¹ եւ Մեսրոպ Եպիսկոպոսներու եւ Գաբրիկեանի)	
13 հատ վաճառուած 30-էն.....	390
3 հատ վաճառուած.....	80
9 հատ անվաճառ	
2 հատ անյայտ ----	32

ասպարէզը՝ Կիրեղ եպս. Գաբրիկեան (1921-2003), դառնալով Երուսաղէմի հայոց պատրիարքութեան նոր շրջանի պատմութեան կարեւոր դէմքերէն մէկը եւ տեղի Ս. Թարգմանաց վարժարանի երկարամեայ տեսուչ ու Ս. Տեղեաց արթուն պաշտպան:

⁸ Կարապետ Գաբրիկեան ցեղասպանութեան տարիներուն կորսնցուցած էր կինն ու զաւակները: Հալէպ գտնուած միջոցին կը ծանօթանայ ու կ'ամուսնանայ Ազնիւ Նորարեւեանի հետ, որ նոյնպէս վերապրող մըն էր:

⁹ Նկատի ունի Եղիշէ արք. Դուրեանը, ծնեալ Կ. Պոլիս, Սկիւտար, 23 Փետր. 1860ին: 1878ին սարկաւագ, 1879ին արեղայ կը ձեռնադրուի Մկրտիչ եպս. Իզմիրլեանէ: 1890-1914՝ Արմաշու դպրեվանքն է, նախ որպէս ուսուցիչ-տեսուչ, ապա փոխվանահայր-վերատեսուչ: 1909-10՝ պատրիարք Կ. Պոլսոյ: 1921էն մինչեւ 1930ին պատահած մահը եղած է Երուսաղէմի պատրիարք: Հեղինակ պատմական, բանասիրական ու գեղարուեստական գործերու:

¹⁰ Մկրտիչ եպս. Աղաւնունի, ծնեալ Պարտիզակ, 1863ին: 1890ին կը ձեռնադրուի Նիկոմիդիոյ մէջ ու կը դառնայ Նիկոմիդիոյ առաջնորդական փոխանորդ եւ այցելու հովիւ Պոլսի (1890-94), առաջնորդ Քէօթահիոյ եւ Աֆիոն Գարահիսարի (1895-1905), Եգիպտոսի (1905-12): 1910ին կ'եպիսկոպոսանայ: 1916ին Կ. Պոլսէն կը տարագրուի Երուսաղէմ, ուր եւ կը մնայ մինչեւ իր մահը՝ 1941, վարելով պատասխանատու պաշտօններ ու ըլլալով ուսուցիչ Ժառանգաւորաց վարժարանի: Հեղինակ՝ բազմաթիւ մենագրութիւններու ու յօդուածներու:

¹¹ Բաբէլէն եպս. Կիւլեսէրեան ծնած է 23 Մարտ 1868ին, Այնթապ, ուր աւարտած է Վարդանեան կրթարանը: Արմաշու դպրեվանքէն շրջանաւարտ ըլլալէ ետք 1895ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ: Վարած է Ճանիկի (1897-99), Տարօնոյ (1899-1900), Գաղատիոյ (1909) առաջնորդութիւնները, եղած է փոխվանահայր ու վերատեսուչ Արմաշու դպրեվանքի: Եպիսկոպոս՝ 1910ին: 1923ին կը հասնի Ս. Յակոբեանց վանք, ուր դասախօսի պաշտօն կը ստանձնէ Ժառանգաւորաց վարժարանի ու ընծայարանին մէջ: 1928ին Կիլիկիոյ Սահակ Բ. Խապայեան կաթողիկոսի տնօրինութեամբ կը կարգուի աթոռակից կաթողիկոս: 1930ին կը հաստատուի Անթիլիաս: 1931ին Հալէպի մէջ կը ստանայ կաթողիկոսական ձեռնադրութիւն եւ օծում: Կը վախճանի 9 Յուլիս 1936ին, յԱնթիլիաս: Հեղինակ՝ պատմա-բանասիրական բազմաթիւ աշխատութիւններու:

Սոյն 487 Եգիպ. Ղրշ. գումարի փոխարեն կը ներփակեմ ՉԷՔ մը Ձեր հրամանին վճարելի, Բարիզի վրայ, ՉՈՐՍ ՀԱՐԻԻՐ ՔԱՌԱՍՈՒՆ ՀԻՆԳ ֆրանքի, թիւ 215727 / 37152:

Անյայտացած երկու օրինակներու մասին որեւէ յիշատակութիւն չգտայ Հանգուցեալի ծանօթագրութեանց մէջ: Այրին ալ բան մը չգիտեր: Իսկ մը-նացեալ ինը օրինակները պահուած են քովս ու կը սպասեն Ձեր հրամանին: Եթէ աժան գինով գնորդներ գտնեմ, ձեռքէ պիտի հանեմ, բայց դժբախտաբար ոչ ոք կը մօտենայ, որովհետեւ ժամանակը առաջացած է:

Հանգուցեալ Գաբիկեանի ղրկածդ նամակներուն մէջէն Բաբգէն Սրբազանի վերաբերեալ տողերը կարդացի իրեն: Կարծեմ Սրբազանը հարկ եղածը գրած է Ձեզ շահագրգռող խնդիրներու վերաբերեալ:

Ցաւակցական նամակնիդ յանձնեցի Հանգուցեալի Այրիին: Լսեցի թէ պիտի աշխատի ղրկել Ձեր խնդրածները:

Դեղագործ Տիար Սինանեանի հաղորդեցի եղբօրը¹³ մահուան գոյժը: Տիար Սինանեան շատ աշխատեցաւ, Վանքն ալ միջամտեց զայն Երուսաղէմ բերել տալու համար, նոյնիսկ 300 Եգ. Ոսկի երաշխաւորութիւն տրուեցաւ, բայց անհետեւանք մնաց:

Սրբազան Պատրիարքի վերաբերեալ տողերդ օրինակելով ղրկեցի Նորին Ամենապատուութեան, որպէսզի աչքի առջեւ ունենայ իբրեւ յուշարար:

Ժառանգաւորաց Վարժարանի Ուսուցիչ Գրիգոր Էօլմէզեան (Անմահունի)¹⁴ յանկարծամահ եղաւ 1924 Մայիս 15-ի լուսնալիք գիշերը:

Տպարանը չկարողացանք բանալ տակաւին գրաշարի չգոյութեան պատճառով¹⁵: Չորս ամիս առաջ Պաղեստին մուտքի արտօնութիւնը

¹² Թերեւս նկատի ունի *Ջուլումը մեր որբերը. ճառ արտասանուած Գընալըի “Աղամեան” թափրոնին մէջ 30 Դեկտ. 1920-ի գիշեր գրքոյկը, տպագրուած Կ. Քեշիշեան որդի տպարանէն, Կ. Պոլիս:*

¹³ Թէոդիկի 13 Մարտ 1925 թուակիրէն կը տեղեկանանք, թէ հանգուցեալը սկիւտարցի քարակոյի Գրիգոր Սինանեանն է, որ ունեցած է քոյր մը եւս՝ Զմիտնիոյ Մեսրոպեան վարժարանի նահատակ տեսուչ փրոֆ. Անդրանիկ Կարապետեանի (1880-1922) այրին՝ Տիգրանուհին (Ղազարեան, էջ 293):

¹⁴ Գրիգոր Էօլմէզեան կամ Անմահունի (1864-1924), եղած է դերձակ, ապա ինքնազարգացմամբ դարձած է ուսուցիչ: 1905ին ծննդավայր Մանիայի մէջ հիմնած է հայ-ամերիկեան վարժարանը: 1907ին անցած է Երուսաղէմ, ուր պաշտօնավարած է մինչեւ իր մահը: Երկերը՝ *Երախայրիք, Աշխարհաբարի քերականութիւն, Բնագանցական գիտութիւնք* եւն. (Ամէնուն տարեցոյցը 1926. նաեւ՝ Ղազարեան, էջ 292):

¹⁵ Յունուար 1919ին մահացած էր վանքի տպարանի անելի քան յիսուն տարուան գրաշարը՝ Կարապետ Փոթովսեանը (Օրագրութիւն Մեսրոպ վրդ. Նշանեանի, Ս. Թէոդորոս ձեռագրատուն, թիւ 3746):

գացած է Եգիպտոս, ուրկէ պիտի գայ գրաշարը, բայց ցարդ այնտեղէն ան-
ցազիր չէ տրուած: Եթէ բանանք տպարանը, նախնական պատրաստու-
թիւններէ վերջ անմիջապէս պիտի սկսինք Հանգ. Օրմանեան Սրբազանի
ԱԶԳԱՊԱՏՈՒՄ-ի երրորդ հատորի տպագրութեան, որուն ծախքը խոստա-
ցած է հոգալ Պօղոս Փաշա Նուպար¹⁶:

Անցեալ անգամ նկարս դրկեցի ոչ թէ հրատարակուելու փափաքով, այլ
իբրեւ դոյզն յիշատակ Ձեզի հանդէպ ունեցած համարումիս: Կենսագրու-
թիւնս ալ ուզած էք: Բայց ինչ կեանք ունեցած եմ որ արժան ըլլայ կենսագրե-
լու: Ով եմ ես,- Պարզ կրօնաւոր մը, որուն համեստ գործունէութիւնը դուրս
չէ ելած Երուսաղէմի վանական սեղմ շրջանակէն: Հետեւապէս ծիծաղելի
ունայնամտութիւն պիտի ըլլար իմ կողմէ Պատկերս ու Կենսագրութիւնս հը-
րատարակուած տեսնելու¹⁷

Բ.

Երուսաղէմ, 4 Յունուար 1926

Սիրելի Պարոն Թէոդիկ,

Ստացայ ժամանակին Վենետիկի Մխիթարեան Տպարանէն հասցէիս
դրկուած 24 հատ 1926-ի ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑ, որոնցմէ մէկը ներկայա-
ցուցի Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր: Մնացեալները գրեթէ
տեղաւորուածի պէս են, իրաքանչիւրը 40-ական եգիպտական դրուշի: Սա-
կայն այս մասին ցարդ Ձեզմէ երկտող մը չստանալուս համար կը զարմա-
նամ: Գիրքերու արժէքը պիտի փոխադրեմ Ձեր հասցէին, անմիջապէս որ
ապառիկներ գանձեմ:

Անցեալ տարուան եօթը Տարեցոյցները, երեք ծրարներու մէջ, տակաւին
կը մնան գրասեղանիս վրայ: Քանի անգամ փոսթին յանձնելու եղայ, բայց
ճանապարհաճախքին մեղքայ: Զանոնք Ձեր որդւոյն¹⁸ ղրկելու համար նոր
հրահանգի կը սպասեմ:

¹⁶ Մաղաքիա արք. Օրմանեանի *Ազգապատում*ի առաջին եւ երկրորդ հատորները
հրատարակուած էին հեղինակին կենդանութեան, յաջորդաբար 1913ին եւ 1914ին,
Պոլսոյ մէջ: Իսկ երրորդ հատորը, որ գրուած էր Երուսաղէմ, ի պահ կը մնար Ս.
Յակոբեանց միաբանութեան քով: Այս մէկն ալ պիտի հրատարակուէր 1927ին, Ս.
Յակոբեանց տպարանէն, Բաբկէն եպս. Կիլեսերեանի հոգողութեամբ եւ Պօղոս
փաշա Նուպարի մեկենասութեամբ, ի յիշատակ իր հօր՝ Նուպար փաշայի:

¹⁷ Թէոդիկ ըստ երեւոյթին յարգած է Մեսրոպ սրբազանի փափաքը եւ 1926ի *Տարե-
ցոյց*ին մէջ ոչինչ հրատարակած է անոր վերաբերեալ: 1927ի տարեցոյցին մէջ սա-
կայն կայ Մեսրոպ եպս. Նշանեանի կենսագրութիւնը (էջ 584-85) եւ լուսանկարը
(էջ 406): Իդէպ, նամակը հոս կ'աւարտի, առանց վերջակէտի ու ստորագրութեան:
Հաւանաբար վերջին քանի մը տողերը չեն արձանագրուած:

¹⁸ Թէոդիկի որդին էր Վահագն Թէոդիկ, ծնած 1903ին եւ ապրած մինչեւ 1960ա-
կանները:

Գալ տարուան Տարեցոյցիդ համար պիտի դրկեմ Հայրիկի¹⁹ անձնական մէկ նամակը (անտիպ)²⁰, սրամիտ եւ օրիժինալ, ուղղեալ առ Կարապետ Եգեանց²¹, ի Բեթըրպուրկ, 1899-ին, վերջինիս ռուսերէն մէկ հրատարակութեան²² առիթով:

Այս անգամ կը ներփակեմ երկու նկարներ, որոնք կ'արժեն որ մէյմէկ տեղ գրաւեն 1927-ի հատորիդ մէջ²³:

Այս տարուան Տարեցոյցդ կը գերազանցէ նախորդները՝ եթէ ըսէի, շատ սովորական ասացուածք մը կրկնած պիտի ըլլայի: Չեմ գիտեր, սակայն, թէ ինչ բառերով հիւսեմ անոր գովքը: Տարեցոյց կազմելու արհեստը երթալով կը կատարելագործէք, ատոր կասկած չկայ: Այդ մարզին մէջ անմրցելի դարձած էք ու մասնագիտութեան դափնին ալ խլած էք: Երբ ՏԱՐԵՑՈՅՑ բառը արտաբերուի իսկոյն մտքի առջեւ կը պատկերանայ ԹԷՈՂԻԿ: Կարծես Անոր մենաշնորհը եղած ըլլայ այդ ապրանքին արտադրութիւնը: Ու իսկապէս միայն ԹԷՈՂԻԿ ֆիրման կը պատշաճի ՏԱՐԵՑՈՅՑ անունը կրող ռեւէ մատեանի: Ինչ պայմաններու մէջ ալ գտնուինք, նպաստաւոր թէ աննպաստ, մօտիկ թէ հեռու, ամէն տարի շահեկան ու փնտռուած հատոր մը երեւան բերելու մոգական գաղտնիքը ունիք: Այս տարուան Հատորիդ թագն ու պսակն է ՈՐԹՆ ՈՒ ԻՐ ԲԵՐՔԸ աշխատութիւնդ²⁴: Խղճամիտ,

¹⁹ Մկրտիչ Խրիմեան, Խրիմեան Հայրիկ, Մկրտիչ Ա. Վանեցի կաթողիկոս ամենայն հայոց: Ծնած 1820ին, Վան: Կնոջ մահէն ետք վարդապետ կը ձեռնադրուի Աղթամարի մէջ, 1854ին: Եպիսկոպոս՝ 1864ին: 1869-73՝ պատրիարք Կ. Պոլսոյ: Պատուիրակ Պերլինի վեհաժողովի: 1891ին կ'աքսորուի Երուսաղէմ, ուր կը մնայ մինչեւ 1893: Կաթողիկոս ամենայն հայոց՝ 1893-1907: 1850ին իբրեւ ուխտաւոր այցելած էր Երուսաղէմ եւ գրած *Հրաւիրակ երկրին աւերեացը*:

²⁰ Հրատարակուած է 1927ի տարեցոյցին մէջ, «Նամակ Խրիմեան Հայրիկէ» խորագրով, էջ 288-89:

²¹ Բանասէր, պատմաբան, ծնած 1835ին, Մոսկուա ու մեռած 1905ին, Ս. Փեթերսպուրկ: Աշխատած է ներքին գործոց եւ ապա կրթութեան նախարարութեանց մէջ: Զբաղած է Սանասարեան ու Իզմիրեանց կտակներու իրականացմամբ: Նիւթապէս նպաստած է Հ. Ղեւոնդ Ալիշանի *Այրարապ* ու *Սիսական* աշխատութիւններու հրատարակման: Հրատարակած է Ղեւոնդի, Յովհան Դարդեյի եւն. գործերը: Ունի նաեւ հեղինակային կարետոր աշխատանքներ հայ-ռուսական յարաբերութիւններու մասին:

²² Հաւանաբար նկատի ունի *Сношения Петра Великого с армянским народом* [Պետրոս Ա.ի յարաբերութիւնները հայ ժողովուրդի հետ] գիրքը, որ հրատարակուած է Ս. Փեթերսպուրկ, 1898ին:

²³ Թէոդիկ-Նշանեան թղթակցութենէն կ'եզրակացնենք, թէ Մեսրոպ սրբազանը ուղարկած է Մաղաքիա արք. Օրմանեանէ երկու լուսանկար: Անոնցմէ մէկուն մէջ, նաւու մը կամրջակին վրայ, քով-քովի կ'երեւին Օրմանեան ու Պօղոս փաշա Նուպար (*Ամէնուն տարեցոյցը 1927*, էջ 488):

²⁴ Թէոդիկ, «Որթն ու իր բերքը», *Ամէնուն տարեցոյցը 1926*, էջ 24-170: Թէոդիկ յաջորդ տարիներու տարեցոյցերուն մէջ հրատարակած է այս աշխատութեան

համբերատար ու մանրակրկիտ ուսումնասիրություն մը, որ ինքնին առանձին հատոր մը կ'արժէ: Շնորհատրություններս:

Մենք հայերս աղուոր մաղթանքներ ունինք: Ճարտար երգիչին կ'ըսենք՝ *Ձայնդ անսպառ, շնորհալի խօսողին՝ Աղբիւրդ անսպառ:*

Ես ալ կը մաղթեմ Քեզի՝ ԳՐԻՉԴ ԱՆՍՊԱՌ²⁵:

Մնամ սիրոյ ողջունի՝

Աղօթանուէր

Գ.

Երուսաղէմ, 6 Փետրուար 1926

Սիրելի Պարոն Թէոդիկ,

Մեծագոյն հաճոյքով ստացայ Յունուար 12 թուակիր Ձեր պատասխանագիրը²⁶ եւ պարունակութեանը տեղեկացայ: Գրիս յապաղելուն պատճառ եղաւ Տարեցոյցներու ապառիկներուն գանձումին սպասելս: Նամակնիդ առնելուս պէս անցեալ տարիէն մնացած եօթն օրինակները դրկեցի Ձեր որդւոյն հասցէին, ապահովագրեալ երեք ծրարներով:

Ձեր հաշիւը կ'ամփոփեմ հետեւեալ կերպով.	Եգ. Դհ.
Վաճառուած 21 Տարեցոյցներու արժէքը (1926 տարւոյ) 40-էն	840
Իմ վաճառած 1925-ի 3 Տարեցոյցներ, մէկը 25-էն, 2-ը 20-էն	65
	905

Նիւ-Եորք դրկուած 7 Տարեցոյցներու փոսթի ծախքը զեղչելով

Կը պահանջէք ՈՒԹ ՀԱՐԻԻՐ ԵՕԹԱՆԱՍՈՒՆ ԵՒ ՀԻՆԳ Եգ. Դահեկան 875

Կը ներփակեմ նաեւ Հայրիկի առ Կարապետ Եզեանց ուղղած նամակի (անտիպ) պատճէնը: Կարապետ Եզեանի ռուսերէն հրատարակութեան մասին (նամակին մէջ յիշուած) հետամուտ եղայ տեղեկութիւններ քաղել, որպէսզի ներփակ պատճէնին կցեմ, բայց չկրցայ: Ձեզ կը թողում ռուսերէն այդ գիրքի վրայօք ծանօթութիւններ մը դնել: Կարապետ Եզեանցի նկարը հնարաւոր չեղաւ գտնել հոս: Պատկերը տեսած եմ, բայց չեմ յիշեր թէ որ գիրքին կամ հանդէսին մէջ կը գտնուի: Զայն փնտռելն ալ Ձեզ կը թողում:

Այվազովսքի²⁷ նկարը Խրիմի մէկ ծովեզերքի (հաւանաբար Թէոդոսիոյ) մէկ գիշերային տեսարանն է²⁸: Ափսոս որ լուսանկարը իսկականին տպա-

յաւելուածները՝ *Ամէնուն փարեցոյցը 1927*, Փարիզ, էջ 120-24, *Ամէնուն փարեցոյցը 1928*, Փարիզ, էջ 141-44:

²⁵ «Ի՛նչ պայմաններու մէջ ալ գտնուիք» էն սկսեալ մինչեւ այս կէտը Թէոդիկ տեղադրած է 1927ի տարեցոյցի «Ընթերցողներս ու ինքս» բաժնին մէջ (էջ 2):

²⁶ Թէոդիկի նամակը տե՛ս՝ Ղազարեան, էջ 279-80:

²⁷ Մեծանուն ծովանկարիչ Յովհաննէս Այվազովսքի (1817-1900):

²⁸ Լուսանկարը հրատարակուած է 1927ի տարեցոյցի «Գեղարուեստական» բաժնին մէջ, էջ 371, «Գիշերային տեսարան Խրիմի ծովափը» անունով: Որպէս բացատրութիւն գրուած է, որ իւղաներկ պատկերը «կը զարդարէ Երուսաղէմի Ս.

տրութիւնը չի թողուր: Եւրոպացի կամ ամերիկացի այցելուներ երբ մեր պատրիարքարանի դահլիճը մտնեն, նկարին առջեւ կանգ կ'առնեն ու հիացումով կը դիտեն:

Կը յուսամ թէ Ձեր նոր միջավայրէն գոհ պիտի մնաք բարոյապէս եւ նիւթապէս²⁹: Ազգային շրջանակ մը ունիք այժմ Ձեր բոլորտիքը, որ մեծ առաւելութիւն մըն է բաղդատմամբ Գօրֆուի մեկուսացեալ կեանքին, ու միջոցներ ալ ունիք առաւելագոյն չափով նուիրուելու գրական զբաղումներու: Ձեմ տարակուսիր թէ պիտի օգտուիք պատեհութիւններէն ու Ձեր 1927-ի Տարեցոյցը *փարլախ*³⁰ բան պիտի ըլլայ: Կը մաղթեմ համբերութիւն ու յաջողութիւն:

Գործերը մեր մօտ գոհացուցիչ ընթացք ունին: Այս տարի կրթականին մասնաւոր զարկ տրուեցաւ, Ժառանգաւորաց Վարժարանի վրայ հինգ տարուան լրացուցիչ դասընթացքի յաւելումով, ունենալով գլուխ եւ ուղեցոյց Նորին Ամենապատուութիւն մեր սիրելի եւ ամենապատուական Պատրիարք Հայրը³¹: Սակայն Տպարաննիս դանդաղ կը քալէ ու ատոր միակ պատճառն է ցարդ շէնք շնորհք գրաշար մը ձեռք անցնել չկրնալնիս³²: Այդ էսնաֆին³³ պատկանողները ընդհանրապէս առաւ-փախաւներ կ'ըլլան կոր: Շնորհակալ պիտի ըլլայի եթէ Ձեր ճանչցած արհեստին քաջահմուտ եւ խըղճամիտ գրաշար մը ներկայացնէիք ինծի: Հիմայ մամուլի տակ է հանգուցեալ Օրմանեան Սրբազանի³⁴ ԱԶԳԱՊԱՏՈՒՄ-ի երրորդ մասը, որու մինչեւ

Յակոբեան վանուց դահլիճը»: Հարկ է նշել, թէ Երուսաղէմի պատրիարքարանի դահլիճին մէջ նման իւղանկար մը չկայ այժմ:

²⁹ Թէոդիկ այդ շրջանին, գործի բերմամբ, Քորֆուէն փոխադրուած էր Կիպրոս, Նիկոսիա: 15 Փետր. 1926 թուակիր նամակի մը մէջ Մեսրոպ սրբազանի կը յայտնէ, թէ «*նոր միջավայրս հեռի է զիս գոհացնելէ. Գորֆուէն ասելի մեծ ամայութիւն մը շուրջպարած է զիս*» (Ղազարեան, էջ 281):

³⁰ Փայլուն (թրք.):

³¹ Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանը, որ 1843ին հիմնադրուած էր Զաքարիա Բ. Կոբեցի պատրիարքին կողմէ, փակուած էր առաջին աշխարհամարտի ընթացքին, 1917ին: Երեք տարի չորս ամիս փակ մնալէ ետք, 1920-21 կրթաշրջանի սկիզբը, 14/27 Սեպտ. 1920ին վարժարանը իր դռները վերստին կը բանայ, Մեսրոպ վարդապետի տեսչութեամբ:

³² Ս. Յակոբեանց տպարանը հաստատուած է 1833ին, Գաբրիէլ Նիկոմիդացի պատրիարքի շրջանին: Առաջին աշխարհամարտի վաղորդայնին, ինչ-ինչ պատճառներով, ան փակ կը մնայ տասը տարի շարունակ, 1915-1925ի միջեւ: Ինչպէս Ժառանգաւորաց վարժարանը, տպարանն ալ կը վերաբացուի Եղիշէ արք. Դուրեանի օրօք, Մայիս 1925ին:

³³ Արհեստակիցներու խմբաւորում (թրք.):

³⁴ Մաղաքիա արք. Օրմանեան (1841-1918), նախկին պատրիարք Կ. Պոլսոյ, պատմաբան, աստուածաբան, հեղինակ բազմաթիւ ուսումնասիրութիւններու, որոնց կարեւորագոյնն է *Ազգապարտմ* եռահատոր աշխատանքը: Օրմանեան Ազգային կեդրոնական վարչութեան որոշմամբ 1913ի վերջին ամիսներուն, որպէս քննիչ

8-րդ ֆորման հասած ենք: Հատորը պիտի պարունակէ 70-է ամէլի ֆորմաներ: Այս ընթացքով բաւական ուշ լոյս պիտի տեսնէ:

Սիրալիլի ողջոյններ եւ մաղթանքներ Ձեր առողջութեան համար:

Աղօթարար

Դ.

Երուսաղէմ, 5 Ապրիլ 1926

Մեծայարգ եւ Սիրելի Պարոն Թէոդիկ,

Մեծ հաճոյքով ստացայ փետրուար 15 թուակիր Ձեր պատուական նամակը³⁵: Թէեւ պատասխանը բաւական ուշացուցի, բայց կը յուսամ թէ ներողամիտ պիտի ըլլաք, նկատի ունենալով որ դատարկածեռն չեմ ներկայանար այս անգամ:

Հանգուցեալ Գաբրիէանի ղրկած Հայկական մոզայիքի նկարը շատ ուղորմելի բան էր, որը եթէ Տարեցոյցիդ մէջ արտանկարուելու ըլլար, տկար գաղափար մը անգամ չպիտի տար օրիժինալի մասին: Առանձին ապահովագրեալ ծրարով նոյն մոզայիքի լաւագոյն մէկ նկարը կը ղրկեմ յառաջիկայ Տարեցոյցիդ համար, իմ կողմէ պատրաստուած յօդուածի մը հետ միասին: Թէեւ, ըստ բաղձանացոյ, պարզ նկարագրական մը ընելու դիտումով սկսայ, սակայն համեստ ուսումնասիրութեան մը կերպը առաւ: Շատ ուրախ պիտի ըլլամ եթէ յօդուածս նպաստէ Տարեցոյցիդ *փառլախութեան* աղօտ *ծիլ*³⁶ մը անելցնելու: Պիտի խնդրէի որ պատուիրէիք հոգ տանիլ տպագրական սխալներու, մանաւանդ բնագիրներուն մէջ, ուր սպրդած վրիպակներ կը փճացնեն գործին արժէքը: Մասնաւորապէս ուշադիր ըրէք որ ծանօթութիւնները ճիշդ իրենց տեղերը դրուին: Մեր Սրբազան Պատրիարքը աչքէ անցուց ձեռագիրը ու յարմար դատեց տպագրուելու Տարեցոյցիդ մէջ³⁷:

Ձեր փափաքին համաձայն կը ներփակեմ հանգուցեալ Օրմանեան Սրբազանի ինքնագիր մէկ նամակը, գրուած 1914 օգոստոս 21-ին, առ Սուրբ Խաս արքեպիսկոպոս Պարզեանց³⁸ յէջմիածին: Նամակը ժամանակին կէս

ուղարկուած էր Երուսաղէմ, ուր կը մնայ մինչեւ 1917ը, եւ ի շարս բազմաթիւ այլ աշխատութիւններու, կ'աւարտէ նաեւ *Ազգապայքումի* երրորդ հատորը:

³⁵ Թէոդիկի նամակը տե՛ս՝ Ղազարեան, էջ 281-82:

³⁶ Զնարակ, փայլ (թրք.):

³⁷ Սրբազանին ուղարկած նկարը Երուսաղէմի յայտնի հայկական խճանկարն է: Արդարեւ այս լուսանկարը զարդարած է 1927ի տարեցոյցին կողքը, ինչպէս նաեւ տեղադրուած սրբազանին՝ խճանկարին վերաբերող յօդուածին մէջ («Երուսաղէմի հայկ. խճանկարը», էջ 399-406):

³⁸ Միաբան Մայր աթոռի: Ծնած էր Նախիջեան, Աստապատ գիւղը, 1837ին: Ուսումը ստացած է Ս. Էջմիածնի Ժառանգաւորաց վարժարանի մէջ: 1860ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ: 1874ին Գէորգ Դ. կաթողիկոս զինքը նշանակած է նորաբաց Գէորգեան ճեմարանի փոխտեսու: 1875ին օծուած է եպիսկոպոս: Վարած է պատասխանատու բազմաթիւ պաշտօններ: Քանիցս աքսորուած է: Իր ծախսով կառուցուած է Մայր աթոռի տպարանի մէկ մասը: Նոյնպէս իր

ճամբէն վերադարձած է, վերահաս պատերազմին հետեւանքով ճամբաները փակուելուն պատճառաւ: Այդ նամակը նկարին քովիկը շատ յարմար պիտի երթայ: Նկարը դէպ երուսաղէմ ճամբորդութիւնը կը ներկայացնէ եւ նամակն ալ գրուած է Երուսաղէմէն, ուր իր պաշտօնին վրայօք ականարկութիւններ ալ կան: Պիտի խնդրէի որ բնագիրը վերադարձնէիք, իւր տօսիէին մէջ պահուելու համար³⁹:

Գրաշար Մկրտիչ Նահապետեանի մասին անմիջապէս գրեցի Պոլիս մեր Սմբատ եպիսկոպոսին⁴⁰: Նամակս կարդացած պահուն Աբիկ Մուպահեանէն⁴¹ ալ քովն է եղեր ու ինքն ալ երկրորդեր է Ձեր պատուաւոր վկայութիւնը: Սակայն Մուպահեանէն յայտներ է թէ Մկրտիչ Նահապետեան կը տառապի այժմ կուրծքի բաւական լուրջ տկարութեամբ: Հիմայ վարանումի մէջ եմ, եթէ բերել տալու ըլլամ, կ'ապաքինի՝ թէ ոչ: Կը վախճամ որ վրանիս բեռ ըլլայ ու մենք հիւանդապահութիւն ընելու պարտաւորութիւնք, առանց տեսնելու իրմէ սպասուած օգուտը:

Ողջունիւ սիրոյ եւ յաջողութեան ջերմագին մաղթանքներով,

Աղօթանուէր

Ե.

Երուսաղէմ, 19 Ապրիլ 1926

Սիրելի Պարոն Թէոդիկ,

Մեծագոյն հաճոյքով ստացայ ամսոյս 14 ամսաթիւ Ձեր պատուական նամակը: Շատ շնորհակալ եմ որ յիշեցուցիք 1922-ի Տարեցոյցիդ մէջ

մեկենասութեամբ հրատարակուած է «Պատմագիրք հայոց» մատենաշարը: Մեծ չափով նպաստած է Օրմանեանի գիրքերու հրատարակութեան: Մահացած է 12 Սեպտ. 1914ին (*Արարար*, Սեպտ. 1914, էջ 789-92):

³⁹ Թէոդիկ չէ հրատարակած Օրմանեանի նամակը, որովհետեւ «քովանդակութիւնը ոչինչ կը ներկայացնէր» (Ղազարեան, էջ 283):

⁴⁰ Սմբատ եպս. Գազազեան, ծնած 1875ին (ըստ *Սիոնի*, իսկ ըստ Աղանունիի՝ 1873ին), Կ. Պոլիս: Միաբան Երուսաղէմի, ձեռնադրուած է 1902ին: 1910-32՝ եղած է Երուսաղէմի պատրիարքութեան փոխանորդը Կ. Պոլսոյ մէջ, ըլլալով նաեւ Կ. Պոլսոյ պատրիարքական փոխանորդը: 1924ին եպիսկոպոս ձեռնադրուած է: Վախճանած է 1935ին, Երուսաղէմ:

⁴¹ Պոլսահայ խմբագիր, հանրային գործիչ, որ երկար տարիներ վարած է Կ. Պոլսոյ հայոց պատրիարքութեան թրքերէնի դիւանապետութիւնը: Ծնած է 1871ին: Կրթութիւնը ստացած է Օրթագիւղի Թարգմանչաց վարժարանի ու Հայկ. կրթարանի մէջ: Եղած է ազգային երեսփոխան, Կարինի Սանասարեան վարժարանի հոգաբարձու, Օրթագիւղի եկեղեցոյ թաղային խորհուրդի անդամ: Աշխատակցած է *Սուրհանդակ*, *Քիւզանդիոն*, *Ժամանակ*, *Վերջին լուր* եւն. թերթերու: Մեռած է 1946ին ու թաղուած՝ Շիշլիի ազգ. գերեզմանատան մէջ: (Շնորհակալութիւն պուսահայ գրող Գէորգ Գրիգորեանին, որ այս տեղեկութիւնները տրամադրեց իր աշխատասիրած, բայց տակաւին չհրատարակուած կենսագրական բառարանէն):

հրատարակուած Ձեր եւ Տէր Վարդանեանի⁴² գրութիւնները խճանկարներու մասին: Ես ալ աղօտ իմն կը յիշէի այդպէս գրութիւն մը կարդացած ըլլալս, բայց չկրցայ մտաբերել թէ ո՞ր: Կը խնդրեմ որ Ձեռագրիս 9-րդ երեսին վրայ աղբիւրներու կարգին աւելցնէք,

8.- Թէոդիկ, Ամէնուն Տարեցոյցը, 1922, երես 221-228:

Նոյնպէս հաճեցէք ձեռագրիս 6-րդ երեսին 16-րդ տողին վրայ ընել հետեւեալ սրբագրութիւնը.

Գարեգին վարդապետ (այժմ արքեպիսկոպոս) Յովսէփեան
փոխել

Յովսէփեան սարկաւազ (այժմ Գարեգին արքեպիսկոպոս⁴³)

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր կարդացի նամակիդ մէջէն իրեն վերաբերեալ տողերը: Կ'ողջունէ Ձեզ սիրով ու կ'ըսէ *Ուզածները Մայիս ամսոյ մէջ ձեռքը կը հասնին, թող ապահով ըլլայ:*

Ողջունի սիրոյ եւ յաջողութեան մաղթանքներով,

Աղօթանուէր

2.

Երուսաղէմ, 13 մայիս 1926

Սիրելի Պարոն Թէոդիկ,

Ստացայ անցեալ ամսոյ 27 թուակիր Ձեր քառօր, ինչպէս նաեւ անոր յաջորդող նամակը, որ կը վերաբերէր հանգուցեալ նկարիչ Պետրոս Սրապեանի⁴⁴: Այդ մասին յատկապէս գացի ու տեսնուեցայ հանգուցեալի աղջկան Տիկին Ֆետրիկեանի հետ ու նամակնիդ իրեն յանձնեցի, որպէսզի աչքի

⁴² Յովսէփ Տէր Վարդանեան ծնած էր Մարաշ, որպէս զաւակը Վարդան Ա. քնյ. ու Ագապի Տէր Մինասեաններու: 1915ին ընտանեօք կը տեղահանուին ու կը հասնին Սուրիոյ հիւսիսը գտնուող Մումպուր գիւղը: Միջոց մը ետք կ'նոց ու զաւակներուն հետ կ'ապաստանի Հալէպ: 1928ին Երուսաղէմի Ս. Յակոբեանց տապարանէն կը հրատարակուի իր *Ինթիլի-Այրանի սպանողը 1916 (մութ մնացած էջ մը Մեծ Եղեռնէն)* վկայագրութիւնը: Տէր Վարդանեան հեղինակած է նաեւ *Մարաշի ջարդը 1920-ին եւ պարմական համառօտ ականարկ մը իր անցեալին վրայ* գրքոյկը, որ տպուած է Երուսաղէմ, տպ. «Արաքս», 1927ին: Երկուքն ալ հրատարակուած են Ս. Աթոռի միաբան Եղիշէ եպս. Զիլինկիրեանի մեկենասութեամբ:

⁴³ Գարեգին արք. Յովսէփեանց (1867-1952), կաթողիկոս տանն Կիլիկիոյ, նշանաւոր՝ որպէս արուեստաբան ու հայագէտ: Բարձրագոյն կրթութիւնը ստացած է Գերմանիոյ մէջ, յաճախելով Լայփցիկի, Պերլինի եւ Հալլէի համալսարանները: Յովսէփեանց ունի Երուսաղէմի հայկական ժառանգութեան նուիրուած ուսումնասիրութիւններ եւ:

⁴⁴ Սրապեան ծնած է 1833ին, Կ. Պոլիս, Օրթագիւղ: Նախնական կրթութիւնը ստացած է Սկիւտարի ճեմարանի մէջ, բարձրագոյն ուսումը՝ Հռոմ: Պոլիս վերադառնալով աշխատած է Պալեաններու քով: Գծագրութիւն եւ նկարչութիւն դասաւանդած է Պոլսոյ դպրոցներու մէջ: Եղած է Ինտրայի ուսուցիչը: 1893-96՝ Խրիմեան Հայրիկի հրաւերով գտնուած է Մայր աթոռ, որ ձեւաւորած է վեհարանի դահլիճն ու թանգարանը: 1896էն սկսեալ ապրած է Սոֆիա, որ մեռած է 1898ին:

առջեւ ունենայ զայն ու աշխատի գոհացում տալ Ձեր փափաքին: Պարոն Արամ⁴⁵ Ֆնտըզլեան Պոլիս մնացած է, Երուսաղէմ ուխտի եկած են միայն Տիկինը ու երկու աղջիկները: Զատիկէն անմիջապէս ետք մտադիր էին վերադառնալ, սակայն Տիկին Ֆնտըզլեանի երէց աղջկան անակնկալ դժբախտութիւն մը պատահեցաւ, այն է պտոյտի մը պահուն ոտքը դարձաւ ու ոսկորը կոտրեցաւ եւ ստիպուեցան տեղիս Ֆրանսական հիւանդանոցը փոխադրել, ուր կոտրած ոտքը գաճի մէջ առին ու այդպէս 40 օր անշարժ պիտի մնայ: Ատոր համար մայրը եւ քոյրը շատ սրտաբեկ են ու հիւանդին սնարէն չեն բաժնուիր: Այսու հանդերձ խոստացան նամակնիդ դրկել Պոլիս Պր. Արամ Ֆնտըզլեանի, որպէսզի Ձեր ուզած տեղեկութիւնները տայ:

1927-ի Տարեցոյցիդ կողքին համար Ձեր ընտրութեան մասին լուրիւնս բացարձակ հաւանութիւն կը նշանակէ եւ ոչ ուրիշ բան, ինչպէս կ'ըսէ թուրքերէն առածը *Սիքիւթ իքրարութան իլէրի կէլի*⁴⁶: Միթէ Ձեր կիրթ ճաշակն ու ընտրութիւնը որեւէ առարկութիւն կամ դիտողութիւն կը վերցնէ: Այսու հանդերձ ըսեմ որ եթէ յաջող *որբրօրիքսիօն* մը ունենաք, կողքի այդ նկարը *խըլախ*⁴⁷ բան մը պիտի ըլլայ ու հրաշալի տպատրութիւն պիտի թողու:

Ձեր փափաքին համաձայն կը ներփակեմ կենսագրութեանս ուրուագիծը: Ինչպէս յառաջագոյն ալ գրած եմ, գործունէութիւնս վանական անձուկ շրջանակէն դուրս չէ ելած, ատոր համար չ'արժեր հրատարակութեան տալ զայն, մի գուցէ թեթեւօլիկ ունայնամտութիւն համարուի: Այսու հանդերձ եղիցին կամք քո:

Նորին Ամենապատուութիւնը պիտի կատարէ իր խոստումը անպայման, միամիտ եղէք: Իրեն վերաբերեալ տողերը կարդացի, նոյն հաւաստիքը տըլաւ:

Սիրոյ ողջունիւ եւ յաջողութեան մաղթանքներով,

Է.

Երուսաղէմ, 9 Յուլիս 1926

Սիրելի Պարոն Թէոդիկ,

ՏԱՐԵՑՈՅՑԻդ գեղարուեստական բաժինին համար յատկապէս պատրաստել տուի ներփակ լուսանկարը իւղաներկի մը⁴⁸, նկարուած Տիրան Չը-

⁴⁵ Պէտք է ըլլայ Արտաշէս:

⁴⁶ Լուրիւնը հաւանութեան նշան է (թրք.):

⁴⁷ Գեղեցիկ, հաճելի (թրք. ոմ.):

⁴⁸ Ինտրայի խնդրոյ առարկայ ստեղծագործութիւնը՝ «Վերջալոյսն ի Մարմարա», հրատարակուած է 1928ի տարեցոյցին մէջ, էջ 533: Որպէս բացատրական տըրուած են Մեսրոպ եպս. Նշանեանի նամակին այս տողերը:

րաքեանի⁴⁹ կողմէ (Ինտրա) 1892-ին ու նուիրում իր հայրենակից ու ազգական հանգուցեալ Տէր Մամբրէ Եպիսկոպոս Մարկոսեանի⁵⁰:

Նկարը, այժմ իմ տրամադրութեանս տակ, կը ներկայացնէ Մախսուսէի⁵¹ շոգենաւ մը, որ աշնան իրիկնամուտի մը կը մօտենայ Կղզիներուն⁵²: Հոն յաջողակ վրձինով երեան բերում ի Մարմարայի վրայ աշնանային վերջալոյսի ամէն երանգները ներդաշնակ դասաւորութեամբ եւ բնութեան հարազատ նմանութեամբ: Տեսնող գեղարուեստասէրները շատ կը հաւնին ու կը գնահատեն: Ափսոս որ ներփակ լուսանկարը իսկականին հեռաւոր պատրանքը կու տայ: Տ. ՉՐԱՔԵԱՆ ստորագրութիւնը աղօտ իմն կը կարդացուի լուսանկարի աջակողմեան վարի անկիւնը, վրան ալ դրում է 92 թուականը: Լուսանկարողն է Գրիգոր Խանճեան:

Սիրոյ ողջունիւ եւ յարգանքներով,

Ը.

Երուսաղէմ, 28 Օգոստոս 1926

Սիրելի Պարոն Թէոդիկ,

Ստացած եմ յաջորդաբար 19 յուլիս եւ 9 օգոստոս թուակիր Ձեր երկու քարթերը:

Հանգուցեալ Մամբրէ Սրբազան իմ տեսուչս ու դաստիարակս եղած է ու մաքուր յիշատակ մը պահած եմ իրմէ, այդ պատճառաւ սիրով եւ ուրախութեամբ ընդ առաջ կու գամ խնդրանքիդ՝ ներփակելով իւր կենսագրութիւնը, զոր ընդօրինակեցի ասկէ քսանամեակ մը առաջ ԲԻԻԶԱՆԴԻՈՆ-ի մէջ իմ

⁴⁹ Չրաքեան, կամ գրական անունով Ինտրա, ծնած է Պոլիս, Սկիւտար, 1875ին: Շըրջանաւարտ Պէրպէրեան վարժարանէ, միջոց մը ուսուցչութեամբ զբաղելէ ետք, կ'երթայ Փարիզ, ուր կը հետեւի նկարչութեան ու գրականութեան դասերու: 1906ին կը հրատարակէ *Ներաշխարհը*, 1908ին՝ *Նոճաստանը*: 1910էն ետք կը հարի շաբաթապահութեան ու կը դառնայ ամետարանի քարոզիչ: Որպէս յեղափոխական ու կասկածելի անձ կը ձեռքակալուի: Կը նահատակուի 1921ին, Տիարպէքիի մօտ: Չրաքեան նաեւ յայտնի գեղանկարիչ էր:

⁵⁰ Մամբրէ Եպս. Մարկոսեան, կամ Եազըճեան, ծնած էր Արաբկիր, Ծագ գիւղը, 1835ին: Նախնական կրթութիւնը կը ստանայ Պոլիս, ուր կը հետեւի նաեւ լուսանկարչութեան: Կ'աշակերտէ նշանաւոր լուսանկարիչ Պեհզատ Ումէտի: Միջոց մը հայերէնի ու գծագրութեան ուսուցիչ կ'ըլլայ Ս. Յակոբեանց վանքին մէջ: Կ'ամուսնանայ Արաբկիր: Կնոջ ու որդւոյն մահէն ետք, 1871ին կը դառնայ եկեղեցական, շարունակելով հանդերձ նկարչութեան արուեստը: Պատասխանատու պաշտօններ կը վարէ վանքէն ներս ու դուրս: Եպիսկոպոս՝ 1885ին: Նկարչական աշխատանքներու առընթեր ունի բազմաթիւ տպագրեալ ու անտիպ գրութիւններ: Վախճանած է 1907ին:

⁵¹ Իտարէի մահուսա՝ Պոլսոյ մէջ շոգենաւային փոխադրութեան ընկերութիւն մը, հիմնում 1878ին:

⁵² Նկատի ունի Պոլսոյ Իշխանաց կղզիները (Գնալը, Պուրկազ, Հալքի, Մեծ կղզի եւն.):

հրատարակած⁵³։ Ատկէ մաս մը յապաւեցի, օրուան սաղիմական խնդիրները շօշափելուն եւ հանգուցեալ Սրբազանի կեանքին հետ այնքան սերտ առնչութիւն չունենալուն համար։ Ինչպէս պիտի տեսնէք, իմ պատրաստածս բաական երկար է, Ձեզ կը մնայ կարեւոր կէտերը քաղուածաբար առնել եւ կոկիկ ամփոփում մը ընել⁵⁴։ Կենսագրականիս մէջ յիշուած մեծանուն Պետրոս Աղամեանի⁵⁵ ինքնանկար շատ յաջող Մամբրէ Սրբազանի իղաներկը մեր քով կը գտնուի։ Պիտի ջանամ ատոր լուսանկարն ալ Ձեր տրամադրութեան տակ դնել։ Բայց տակաւին կանուխ է, երբ ժամանակը գայ, հաճեցէք յիշեցնել։

Պիտի ուզեի՞ք որ 1928-ի ՏԱՐԵՅՈՅՑ-իդ համար Խրիմեան Հայրիկէն նոր անտիպ մըն ալ ղրկէի։ Ունիմ քովս շատ գեղեցիկ նամակ մը ուղղած մեծ հայասէր Հէյմս Պրայսին⁵⁶, որով կը շնորհաւորէ իր ամուսնութիւնը ու այդ առթիւ սիրուն ու սրամիտ դարձուածներով հայկական հարցն ալ կը շօշափէ։ Միայն կը կասկածիմ թէ այս վերջին կէտը գրաքննութեան ուշադրութիւնը հրափրէ ու արգելք ըլլայ ՏԱՐԵՅՈՅՑ-իդ Պոլիս մուտքին։

Մեր բարեկամ Պարոն Նուրեան⁵⁷ պիտի աշխատի ձեռք բերել արկածամահ Հայր Կօտէնս Օրֆալիի⁵⁸ մէկ լուսանկարը։

⁵³ Մեսրոպ վրդ. Նշանեան, «Մամբրէ եպիսկ. Մարկոսեան», *Քիւզանդիոն*, Կ. Պոլիս, 2/15 եւ 3/16 Փետր. 1907:

⁵⁴ Մեսրոպ եպս. Նշանեան, «Նկարիչ սրբազանը», *Ամէնուն ցարեցոյցը* 1928, էջ 517-26:

⁵⁵ Մեծանուն դերասան, գրող ու նկարիչ, ծնած 1849ին Կ. Պոլիս, ուր ալ մեռած է 1891ին:

⁵⁶ Անգլ.՝ James Bryce, ծնեալ 1838, Պելֆասթ, մեռած 1922ին, Տեւոն, դերկոմս, անգլիացի պետական, հասարակական-քաղաքական գործիչ, Բրիտանիոյ ակադեմիոյ անդամ, իրաւաբան ու պատմաբան։ Եղած է արտաքին գործոց փոխնախարար, առեւտուրի նախարար եւն.։ Այցելած է Հայաստան։ Բարձրացած է Արարատի գագաթը։ Հանդիպումներ ունեցած է Ներսէս Վարժապետեան պատրիարքի, Մատթէոս Մամուրեանի, սերտ կապեր ունեցած՝ Արշակ Զօպանեանի, Պօղոս փաշա Նուպարի եւն. հետ։ Հեղինակ՝ Մեծ Եղեռնի շրջանի հրատարակուած յայտնի «Կապոյտ գիրք» ժողովածուի։ Երեւանի մէջ իր անունով կայ փողոց մը։

⁵⁷ Երուսաղէմի հայոց պատրիարքութեան բազմամեայ դիւանապետ։ Ծնած է 1878ին, Պոլիս, Բերա, որպէս զաւակը պետական ու ազգային ծանօթ դէմք Յովհաննէս Նուրեանի։ Բարձրագոյն ուսումը ստացած է Անգլիա, Ֆրանսա ու Միացեալ Նահանգներ։ Որպէս հողագէտ, պատասխանատու պաշտօններ վարած է Օսմանեան երկրին մէջ։ Առաջին աշխարհամարտէն ետք վարած է նաեւ ազգային պաշտօններ՝ ըլլալով պատրիարքարանի տեղեկատու դիւանի վարիչը։ Քեմալականներու գալէն ետք կ'անցնի Եգիպտոս, ուրկէ ալ կը հասնի Երուսաղէմ։ Եղիշէ պատրիարք զինք կը կարգէ Երուսաղէմի պատրիարքութեան դիւանապետ, զոր ձեռնհասութեամբ կը վարէ մինչեւ իր մահը՝ 1940:

⁵⁸ Հ. Կոտանս Օրֆալիի (1889-1926) մահագրականը, լուսանկարով հանդերձ, կը կարդանք 1927ի տարեցոյցին մէջ, էջ 637-38։ Ծնած էր Նազարէթ, ուրֆացի

Մնամ սիրալիր ողջոյններով եւ Ձեր յաջողութեան մաղթանքներով,
Թ.

Երուսաղէմ, 4 Սեպտեմբեր 1926

Սիրելի Պր. Թէոդիկ,

Կը ներփակեմ արկածամահ Ֆրանչիսկեան Միաբանութեան անդամ Հայր Օրֆալիի նկարը:

Անշուշտ տեսած կ'ըլլաք ԱՐԵԻ-ի տարույս 29 յուլիսի համարը, որուն մէջ հանգուցեալի մասին գեղեցիկ յօդուած մը ունի Մկրտիչ Աղանունի Սրբազան⁵⁹: Հայր Օրֆալիի կենսագրութեան իբրեւ լրացուցիչ մաս կարելոր է նաեւ հետեւեալը: - Հանգուցեալի հայրը բնիկ Ուրֆացի եղած է, Գրգըլ-Օղլու հայ հռոմէական ընտանիքէն: Ասկէ 50 տարի մը առաջ ուխտաւորութեամբ եկած է Երուսաղէմ, ու վերադարձին երբ կ'անցնի եղեր Նազարէթէն, տեղին Ֆրանչիսկեան մեծաւորը տեսնելով որ յաջողակ արհեստաւոր մըն է, հոն վար կը դնէ, աշխատցնելու համար շինութեանց վրայ, կը յատկացնէ անոր առանձին բնակարան, ու կը պսակէ Նազարէթցի արաբ-քաթօլիկ աղջկան մը հետ: Այդ ամուսնութեան պտուղը կ'ըլլան 2 աղջիկ եւ 3 մանչ զաւակներ, որոնցմէ մէկը Հայր Օրֆալի:

Կը ներփակեմ նոյնպէս Հանգուցեալին առ Տ. Եղիշէ Դուրեան Ս. Պատրիարքն ուղղած 9 հոկտեմբեր 1924 թուակիր նամակի պատճէնը, որ արտայայտիչ է իր հայասիրական անկեղծ զգացումներուն⁶⁰:

Մնամ ողջունիւ սիրոյ,

Ժ.

Երուսաղէմ, 12 Սեպտեմբեր 1926

Սիրելի Պարոն Թէոդիկ,

Ստացայ ամսոյս 6 թուակիր Ձեր քարթը⁶¹: Հանգուցեալ Մամբրէ եպիսկոպոսի կենսագրութեան մէջ գրած եմ. «Մոսկուա հրատարակած է *Երկու խօսք ազգային դաստիարակութեան վրայ*»: Հարկ է ճշդել այսպէս. «Մոսկուա հրատարակած է *Ազգային յառաջադիմութեան մասին մի քանի*

(հոսկէ ալ իր մականունը), հայ-կաթօլիկ հօրմէ ու արաբ-կաթօլիկ մօրմէ: Կրթութիւնը կը ստանայ Ս. Երկրի դպրոցներուն մէջ: 1912ին քահանայ կը ձեռնադրուի, ապա կ'անցնի Հռոմ ու Ֆրիպուրկ, կատարելագործելու իր ուսումը: Կը վերադառնայ Ս. Երկիր, ուր 1925ին կը դառնայ Արեւելեան հնախօսական ընկերութեան նախագահը: 1922ին լատիներէնով կը հրատարակէ «Կաթառնայում եւ իր աներակները» գործը: Արկածահար կը մահանայ Սիւքէմի աներակներու մէջ աշխատած պահուն:

⁵⁹ Մկրտիչ եպս. Աղանունի, «Գիտնականի մը ցաւալի մահը Երուսաղէմի մէջ», *Արեւ*, 29 Յուլիս 1926:

⁶⁰ Հ. Կոտանս Օրֆալիի մասին Մեսրոպ սրբազանի տուած տեղեկութիւնները, լուսանկարը, ինչպէս նաեւ հանգուցեալին՝ Եղիշէ պատրիարքի ուղղեալ նամակը տեղ գտած են 1927ի տարեցոյցին մէջ, էջ 637-38:

⁶¹ Թէոդիկի նամակը տե՛ս՝ Ղազարեան, էջ 285:

*խօսք*⁶², *Վարդգէս կեղծանունով*»: Կը յիշեմ նոյնպէս Զուղայեցիի կրօնաթերթին⁶³ քանի մը կրօնական յօդուածներ տուած ըլլալը⁶⁴: Նմանապէս Խրիմեան Կաթողիկոս Արքութեան տիտղոս շնորհած է բայց հայրապետական կոնդակը⁶⁵ հասաւ այն ատեն, երբ արդէն Մամբրէ եպիսկոպոս մի քանի շաբաթ առաջ վախճանած էր:

Այս անգամ առանձին ծրարով Ձեր հասցէին թղթատարին յանձնեցի հինգ նկարներ, ետեւները կարմրադեղով թուագրուած:

Թիւ 1- Պետրոս Ադամեանի իւղաներկ պատկերի արտանկարը լուսատիպ, որ կը ներկայացնէ Մամբրէ եպիսկոպոսը: Լուսանկարին աջակողմեան ստորին անկիւնը աղօտ իմն կը կարդացուի նկարիչին ստորագրութիւնը, որուն ճիշդ ներքեւը կայ 1885 թուականը, լուսանկարին մէջ անընթեռնելի⁶⁶:

Թիւ 2- Մամբրէ եպիսկոպոսի ինձ նուիրած լուսանկարը, քաշուած մահէն չորսուկէս տարի առաջ⁶⁷:

Թիւ 3- Դարձեալ Մամբրէ եպիսկոպոս, որ նկարուած է իբրեւ մօտէլ ծառայեցնելու համար իր շինելիք Սուրբ Ղեւոնդ երէցի պատկերին: Ասիկա, ինչպէս կը տեսնէք, սիրուն եւ օրիժնալ նկար մըն է, բայց ափսոս որ ժամանակը ըստ բաւականին եղծած է: Նկարին ֆօնը իր շինած թիւ 4 նկարն է:

Թիւ 4- ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐԻՉ ԵՒ ՈՐԴԻՔ ԵՒ ԹՈՌՈՒՆՔ, նկար Մամբրէ եպիսկոպոսի, որ այժմ կը գտնուի Սուրբ Յակոբայ տաճարի գաւիթի հարաւային երրորդ կամարին ներքեւ: Կիսաշրջանակի տրամագծի երկարութիւնն է 3,68 մէթր ու բարձրութիւնը, տրամագծի կեդրոնէն մինչեւ գագաթը, 3,15 մէթր: Լուսաւորչի գլխուն վերեւ սաւառնող հրեշտակի բռնած ժապաւէնին վրայ կը կարդացուի. «Պսակ ծերոց որդիք որդւոց եւ փառք որդւոց հարք իւրեանց: Առակ. ԺԷ 6»: Նոյնին առջեւ գետինը փռուած գալարուն ժապաւէնին վրայ կը կարդացուի. «Ահա ես եւ մանկունք իմ զորս ետ ինձ Աստուած: Եսայ. Ը. 18»: Ստորին ձախակողմեան անկիւնը պատկեր-

⁶² 46 էջնոց գրքոյկը հրատարակուած է 1882ին:

⁶³ Խօսքը Թորոս քինյ. Տէր Իսահակեան-Զուղայեցիի (1861-1938) *Եկեղեցի Հայաստանեայց* կրօնական եւ աստուածաբանական ամսաթերթի մասին է, որ հրատարակուած է նախ Պոլիս, ապա Մանչեսթըր, յաջորդաբար 1888ին եւ 1900ին:

⁶⁴ Մամբրէ եպս. Մարկոսեանէ տպուած կը տեսնենք քարոզ մը ու նամակ մը միայն՝ «Քարոզ ի գեր. Տ. Մամբրէ եպ.է Մարկոսեան ի Սուրբ Ծնունդն Քրիստոսի» (*Եկեղեցի Հայաստանեայց*, նոր շրջան, թիւ 1, Ապրիլ 1900, էջ 19-26) եւ նամակը (նոյն, թիւ 6, Մեպտ. 1900, էջ 190):

⁶⁵ Արքութեան շնորհումի յայտարարութիւնը հրապարակուած է Մայր աթոռի պաշտօնաթերթ *Արարատ* ամսագրի 1907ի Յունուարի Ա. թիւին «Հայրապետական պարգեւք» բաժնին մէջ, էջ 7:

⁶⁶ Մամբրէ սրբազանի՝ Պետրոս Ադամեանի ձեռամբ 1883ին գծուած իւղանկարը տպագրուած է 1928ի տարեցոյցին մէջ, էջ 522:

⁶⁷ Անդ, էջ 525:

ներու թիւերուն համեմատ նշանակուած են իւրաքանչիւրին անունները (լուսանկարին մէջ անընթեռնելի, սակայն ձեռագրով վարը քարթօնին վրայ նշանակուած): Ստորին աջակողմեան անկիւնը կայ հետեւեալ արձանագրութիւնը. Ի յիշատակ ծնողաց իմոց Յակովբայ եւ Խաթունի եւ համայն նընջեցելոց մերոց նկարեալ նուիրեցի Ս. Յակովբայ միաբան Մամբրէ Եպս. Յ. Մարկոսեան: 1896 յունիս 18, յերուսաղէմ: Նկարիս գաղափարը թէեւ իր մտքի ծնունդը չէ, սակայն դիրքերը ինք ձեւաւորած եւ գոյները ներդաշնակած է, ու ամբողջ տարի մը աշխատութիւն թափած է անոր վրայ⁶⁸:

Թիւ 5- ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ, նախ քան Երուսաղէմ աքսորուիլը Պոլիս նկարուած: Թուղթերուս դէգերուն մէջէն գտայ ու կը կարծեմ թէ անտիպ է, որովհետեւ չեմ հանդիպած ոչ մէկ հրատարակութեան մէջ:

Թիւ 1 նկարը Ձեր քով կը մնայ, իսկ բարի եղէք վերադարձնել թիւ 2, 3, 4 եւ 5 նկարները, որոնց երկուքը իմս են եւ երկուքը ուրիշներու:

Կը ներփակեմ երկու անտիպներ Խրիմեան Հայրիկէ: Մէկը նամակ մը դրկուած առ Ճէյմս Պրայս, շնորհաւորական իր ամուսնութեան առիթով⁶⁹: Կը թուի գրուած ըլլալ ի Պոլիս 1888-ին, քանի որ կ'ըսէ. «Տասն տարին անցաւ Հայկական խնդրոյն յղացումն»: Եւ երկրորդը դարձեալ նամակ մը Նոր-Նախիջեւանէն դրկուած առ Նուպար փաշա, 20 մարտ 1895 թուակիր⁷⁰:

Սիրելի Թէոդիկ, կը կարծեմ թէ 1928-ի ՏԱՐԵՅՈՅՅԻ՞դ համար տուրքս լիովին հատուցի, ալ Քեզ տեսնեմ, նորէն *փառլախ* բան մը *մէյրան*⁷¹ հանես, որուն համար ի սրտէ ցանկացող եմ եւ աղօթող Ձեր բարեկեցութեան եւ քաջողջութեան համար:

ԺԱ.

Երուսաղէմ, 1 Նոյեմբեր 1926

Սիրելի Պարոն Թէոդիկ,

Հաճոյքով ստացայ հոկտեմբեր 19 Ձեր թուակիրը⁷²:

Որպէս փափագի եղջերու յաղբերս ջուրց, նոյն ըղձանքով կը սպասեմ 1927-ի հատորիդ օր առաջ հասնելուն: 25 օրինակները տեղաւորելու մասին կրնամ ապահովցնել Ձեզ, իսկ աւելիին համար դժուար թէ երաշխաւորեմ: Ընթերցողներու յոյժ սահմանափակ թիւ մը ունինք այստեղ, մէկ կարելոր մասը կ'ուզէ *օթլախճիութեամբ*⁷³ անօթութիւնը անցընել: Եթէ անհամեստութիւն չըլլայ ըսել այդ 25 գիրքերը մեր դիրքին շնորհիւ կը քշուին, առ ամօթոյ կը պարտաւորուին չմերժել ու դրամը ցնծալ: Այսու հանդերձ կը փորձեմ, եթէ ուզողներ գտնուին, կը գրեմ Ձեզի:

⁶⁸ Անդ, էջ 518:

⁶⁹ Անդ, էջ 306:

⁷⁰ Անդ, էջ 308-12:

⁷¹ Հրապարակ (թրք.):

⁷² Թէոդիկի նամակը տե՛ս՝ Ղազարեան, էջ 285:

⁷³ Հացկատակութիւն (թրք.):

Ֆնտրզվեաններու հետ ես ուղղակի թղթակցութիւն չունիմ: Հասցէնիւն կը ներփակեմ, եթէ կ'ուզէք, Դուք անձամբ գրեցէք իրենց: Թէեւ Տիկին Ֆնտրզվեան հոս գտնուած ատեն գրեց ամուսնւոյն, բայց կ'երեւի վերջինս հաշիւներ ունի վասն ահին հրէից:

Յառաջիկայ Յունուարէն սկսեալ մեր տպարանէն լոյս պիտի տեսնէ, կամ աւելի ճիշդ, պիտի վերհրատարակուի ՍԻՈՆ ամսաթերթը⁷⁴: Նախապատրաստութիւններ տեսնուած են, կը մնայ աշխատակիցներ ապահովել: Երանի թէ հիմնաւոր գործ ըլլար ու կէս ճամբան չմնայինք:

Սիրոյ ողջոյններ եւ յաջողութեան մաղթանքներ:

ԺԲ.

Երուսաղէմ, 27 Դեկտեմբեր 1926

Սիրելի Թէոդիկ,

Հաճոյքով ստացայ ամսոյս 20 թուակիրդ⁷⁵ ու ներփակ քարթը յանձնեցի Սրբազան Պատրիարքին, որ կարդալու պահուն, ըստ գուշակութեանդ, անուշիկ ժպիտը նկարուեցաւ իր բարի դէմքին վրայ, ինչոր արտայայտիչն է Քեզ հանդէպ իր բարեացակամութեան ու ճիտիկդ ծուռ ձգել չուզելուն:

Ստացայ ժամանակին 28 Տարեցոյցներու ծրարները ու յանձնարարութեանդ համաձայն երեքը յանձնեցի նուէրընկալներուն, որոնցմէ ես ինքս կը փութամ յայտնել անկեղծ շնորհակալութիւն ազնիւ մտադրութեանդ համար: Վաճառուած են 23 հատ, թէեւ 7-ը տակաւին ապառիկ կը մնան: Այժմ քովս 2 հատ կայ, անոնց ալ մէյմէկ տեղ կը գտնեմ: Յառաջիկային ամէնուն փոխարժէքը չէքով կը ղրկեմ, միամիտ եղէք:

Ներկայ 1927-ի հատորդ ալ քսանամեակի հատորիդ⁷⁶ հարազատ երկուորեակն է ծաւալով ու պարունակութեամբ: Եթէ նախընթացիդ թագն ու պսակն էր ՈՐԹՆ ՈՒ ԻՐ ԲԵՐՔԸ⁷⁷, այս տարուանիդ ալ լուսապսակն է ԵՐԿԻՆՔ ԵՒ ԱՍՏԵՂՔ ընդարձակ աշխատութիւնդ⁷⁸, որ հատորիդ մուտքը կը զարդարէ եւ ընթերցողին կը թուի աստեղագարդ հոյակապ կամարի մը տակէն եւ դից ու դիցուիեաց շարքերէն անցնելով մտնել Տարեցոյցիդ միւզէին ճոխ ու ընդարձակ սրահները ու վայելել ցուցադրուած բազմազան առարկաները, զորս կիրթ ու ճաշակաւոր ընտրութեամբ դասաւորելու գաղտնիքը Քեզ միայն յատուկ է: Շատ ու շատ ապրիս:

Օրիժինալիդ հետ կը ներփակեմ Յորդանանի սրճագոյն մէկ նկարը, որ նոյն գետին մէկ տարբեր տեսարանը կը ներկայացնէ, աւելի գեղարուես-

⁷⁴ Երուսաղէմի հայ պատրիարքութեան պաշտօնաթերթի հրատարակութիւնը դադարած էր 1877 աւարտին: Սիոն վերստին հրատարակուիլ սկսած է Յունուար 1927ին, Բաբկէն եպս. Կիլեսէրեանի խմբագրապետութեամբ:

⁷⁵ Թէոդիկի նամակը տե՛ս՝ Ղազարեան, էջ 287:

⁷⁶ Նկատի ունի 1926ի տարեցոյցը, որ տպագրուած էր Վենետիկ:

⁷⁷ Թէոդիկ, «Որթն ու իր բերքը», *Ամէնուն տարեցոյցը 1926*, էջ 24-170. նաեւ՝ *Ամէնուն տարեցոյցը 1927*, էջ 120-24. նաեւ՝ *Ամէնուն տարեցոյցը 1928*, էջ 141-44:

⁷⁸ Թէոդիկ, «Երկինք եւ աստեղք», *Ամէնուն տարեցոյցը 1927*, էջ 7-65:

տական, ու մակոյկին երեւցած տեղն ալ այն ասանդական վայրն է, ուր Քրիստոս մկրտուեցաւ⁷⁹: Նոյնպէս կը ներփակեմ նոր ձեռք անցուցած մէկ լուսատիպս հանգուցեալ Մամբրէ Սրբազանի, պատկեր մը նկարելու դիրքին մէջ⁸⁰: Թէեւ քիչ մը գունատ, բայց շատ սիրուն նկար մըն է եւ ճիշդ ու ճիշդ հանգուցեալին արտայայտութիւնը վերջին տարիներուն: Պիտի փափաքէի որ ասիկա մտնէր Տարեցոյցիդ մէջ ու ապա ինծի դարձնէիք տիրոջը յանձնուելու համար:

Ուր ուրեմն ՍԻՈՆ-ը սկսանք հրատարակել: Առաջին թիւը կազմ ու պատրաստ է, եւ հրապարակ պիտի դրուի յառաջիկայ Յունուար 1-ին: Երկար փնտռութիւններէ ետք խելքը գլուխը գրաշարապետ մը գտանք, Տիգրան Թօփալեան անուն, որ գործին հմուտ, աշխատասէր ու խղճամիտ անձնաւորութիւն մըն է, ու իր ներկայութիւնը քաջալերեց մեզ Հանդէսի հրատարակութեան: Առաջին թիւէն անշուշտ հատ մը պիտի դրկեմ Քեզի, այն վստահութեամբ թէ պիտի հոգաս տեղէդ քանի մը բաժանորդներ ճարել: Երանի թէ մեր այս նոր ՍԻՈՆ-ը երկարակեաց ըլլար ու կէս ճամբան չմնար:

Սիրալիւր ողջոյններով եւ յաջողութեան մաղթանօք,
Աղօթանուէր

ԺԳ.

Երուսաղէմ, 21 Յունուար 1927

Սիրելի Պարոն Թեոդիկ,

Կը հաստատեմ անցեալ 27 դեկտեմբեր թուակիրս:

Ներփակ կը գտնէք 1927-ի 25 Տարեցոյցներուդ արժէքին փոխարէն Ձեր հրամանին չէք մը Լոնտոնի վրայ. այսօրուան թուականով, թիւ 275683 / 46079: Գանձեցէք ու հաշիւս փակեցէք եւ ստացումը հաճեցէք երկտողով մը տեղեկացնել ի միամտութիւն: Աստուած նորէն տայ, նորէն խնդացնէ:

Ջերմագին ողջոյններով,
Աղօթարար

[Ձեռագիրով] Ձեքին գումարն է՝ 10 սթերլին եւ 5 շիլլին:

ԺԴ.

Նիկոսիա, 2-2-27

Սիրելի Սրբազան Հայր,

Ի ձեռին ունիմ 21 յնվր. թուակիր] նամակնիդ՝ զիս մութէն ի լոյս հանող ներփակ £10.5 չէքով մը, իբր հաշուեփակ 27ի հատորներուս: Շատ ապրիք: Տող մը վերի խօսքս անո՛ր համար որ 28իս սկիզբ տուի նորէն ի Փարիզ, եւ ստիպեալիմ գործին կէս փոխարժէքը կանխիկ ցնծալ: Ահա թէ ինչո՛ւ ցնծացուց զիս դրկած չէքերնիդ: Նամակնուդ վերջին տողը միտքէս կը կրկնեմ

⁷⁹ Այս լուսանկարը զետեղուած է 1929ի տարեցոյցին մէջ, էջ 105, «Յորդանան (մակոյկին կողմն էր ուր մկրտուեցաւ Յիսուս)» բացատրագիրով:

⁸⁰ *Ամէնուն տարեցոյցը 1928*, էջ 520:

այս պահուս։- Սրբազան Հայր, անցեալ օր Սըր Սթօրս⁸¹ Հաստատութեանս⁸² տուած անպաշտօն այցին՝ իմացուց թէ ամէնուս սիրելի Ս. Պատրիարք Հայրը հիւանդ է։ Բոլորս ալ շատ տրտմեցանք։ Ուրախ պիտի ըլլայինք՝ եթէ Ն. Ամենապատուութեան ապաքինումին աւետիսը շուտ նօթճէիք մեզ։- Ձեր երբեմնի աշակերտ (նաեւ Դուրեան Ս.ի) Գուրգէն Տ. Վարդանեան⁸³ տարեցոյցիս շատ օգտակար կ'ըլլայ իր թելադրութիւններով եւ աշխատակցութեամբ։ Ձեր Ս. Աջը կը համբուրէ, եւ կը խնդրէ որ Փաւստ[ոս] Բուզանդի սա տողը Բաբգէն Ս.ի ցոյց տայիք ի հարկին՝ ճիշդ թարգմանութիւնն իմ միջոցաւ իրեն հաղորդուելու խնդրանօք. «... զի յորժամ ի ձի հեծեալ էր, երան բարձի նորա ոչ յանձին եւ ի ծունկն ոչ հասանէր, այլ ի բացեայ կայ ի ձիոյ անտի»⁸⁴։- Նոյնպէս, իմ նորընտիր պետս՝ ելեւմտից տեսուչ Տիար Օննիկ Թադէոսեան⁸⁵ Ձեր Ս. Աջը կը համբուրէ՝ իր մասնաւոր յարգանքներով, եւ կը խնդրէ որ իրեն ծանօթ ձեր կարգակիցներուն ալ բաժին հանէք անոնցմէ։ Արժանիքս եւ հաշուակալական աշխատանքս գնահատող մըն է ինքը, ինչ որ բարեբախտութիւն մը կը նկատեմ սա դժնդակ պանդխտութեանս մէջ։- Ձեր վերջին թուակիրէն ալ առաջ՝ ձենէ ստացած էի նամակ մը եւ շնորհատրական քարտ. ներողամիտ կ'ըլլաք անշուշտ այսպէս ուշ պատասխանելուս, վասն զի անկողնոյ կը ծառայէի այդ օրերուն։- Քաղաքէն հեռու եմ միշտ եւ ոչ զորք կը ճանչնամ հոն. կրնաք «Սիոն» դրկել մեր հաստատութեան։ Յաջողութիւն կը մաղթեմ։- Մեծագոյն հնհնութս՝ Ամեն. Ս. Պատրիարք Հօրմէ ստանալիք յօդուածս ու քերթուածս է։ Զձեզ ունիմ միայն բարեխօս։ Եւ ես վստահ եմ թէ պաշտելի հայրենակիցս իմ ճիտս ծուռ չի ձգեր նորէն։ Մեծարանաց հաւաստեօք, կը մնամ

Խ.[ոնարի] Ծ.[առայ] Թէոդիկ

ԺԵ.

Երուսաղէմ, 8 Փետրուար 1927

Սիրելի Պարոն Թէոդիկ,

⁸¹ Սըր Ռանըլտ Սթօրս (1881-1955), 1926-32՝ եղած է Կիպրոսի բրիտանական կուսակալ։

⁸² Նկատի ունի Մելգոնեան կրթական հաստատութիւնը։ Թէոդիկ 1926-27ին որպէս հաշուակալ աշխատած է այնտեղ։

⁸³ Գուրգէն Տէր Վարդանեան՝ հեղինակ *Երզնկա-Կամախ գաւառաբարբառը եւ ազգագրական յուշեր* ուսումնասիրութեան, տպուած 1968ին, Երուսաղէմի Ս. Յակոբեանց տպարանէն, ինչպէս նաեւ այլ յօդուածներու։ Աշխատակցած է նաեւ *Ամէնուն տարեցոյցին*։

⁸⁴ Հատուածը առնուած է Բուզանդի պատմութեան, հինգերորդ դպրութեան, «Յաղագս Մերութանայ Արծրունոյ, որ հանդերձ զօրօք եկն ի վերայ Մանուէլի, եւ սատակեցաւ ի նմանէ» վերնագրեալ ԽԳ գլուխէն։

⁸⁵ Հեղինակ է *Բարեգործականի տեսականը* (Պէյրութ, 1965), *Ապրիլեան հրապարտութիւնը ուղղուած բովանդակ մարդկութեան* (Փարիզ, 1949) եւն. աշխատութիւններու։

Ստացայ 2 / 2 / 27 թուակիր Ձեր քառյթը: Կը ներփակեմ Փաւստոս Բ- ուզանդի հատուածին բացատրութիւնը, պատրաստուած Բաբգէն Սրբա- զանի կողմէ: Հաճեցէք յանձնել Պր. Գուրգէն Տէր Վարդանեանի իմ ողջոյ- նիս հետ:

Սրբազան Պատրիարք անցեալ Յունուար 9-էն ի վեր հիւանդ է բաւա- կան լուրջ կերպով: Եղան օրեր որ մահուան ու կեանքի մէջ տատանեցաւ, ու ամբողջ հիւանդութեան ընթացքին տագնապներու եւ սրտադողի մատ- նեց մեզ: Այս վերջին քանի մը օրերը հանդարտած է ու կը յուսանք թէ մտած է ապաքինումի ճամբուն մէջ, թէեւ վիճակը շատ փափուկ է ծայր աստիճան տկարացած ու հիւծուած ըլլալով: Մեծանուն Հիւանդնիս առաջին օրէն ա- ռարկայ է 5-6 բժիշկներու ուշադիր ու հոգածու խնամքին ու Միաբանու- թեան անձնուէր ու որդիական գորգութեան: Դուք ալ աղօթեցէք հեռուէն, որ Նախախնամութիւնը Նորին Ամենապատուութեան թանկագին ու սիրելի կեանքը պահպանէ: Մենք հոս այդ նպատակով ջերմեռանդ ու սրտագին հսկումներ ըրինք: Ես կը կարծեմ թէ 28-ի Տարեցոյցիդ համար չսպասէք Սրբազան Պատրիարքէն որեւէ յօդուած կամ քերթուած: Ներկայ վիճակին մէջ այդ արդէն անկարելի է: Եթէ առողջանալու ըլլայ, բժիշկները պատուի- րած են, որ երկար ժամանակ մտաւոր աշխատանք պէտք չէ ունենայ: Վնաս չունի, կարեւորը այն է որ ինք կատարելապէս բուժուի:

Մեծ. Տիար Օննիկ Թադէոսեանին հաղորդեցէք փոխադարձ ողջոյն- ներս ինչպէս նաեւ իւր պարագաներուն:

Ձեզ եւս ջերմապէս ողջունելով ու յաջողութիւն ցանկալով,

Մնամ աղօթանուէր,

ԺԶ.

Theotig, B. P. 295

Nicosia (Cyprus)

Նիկոսիա, 15 Փետր. 1927

Սիրելի Սրբազան Հայր,

Կը հաստատեմ ամսոյս 2 թուակիրս:- «Սիոն»էն իմացայ բարի լուրը Ն. Ամենապատուութեան ապաքինումին⁸⁶: Ամէնքս ալ ուրախացանք: Մէյմըն ալ չտեսնէ՝ ամէնուս սիրտը թունդ հանող ատանկ հիւանդութիւն: Համբո՛յր իր օրինեալ աջին: Արդեօք արժանի պիտի ըլլա՞մ օր մը այդ համբոյրս իմ շուրթներովս ալ դրոշմելու եւ Ս. Տեղեաց համար վաղեմի բաղձանքս գո- հացնելու:

*Ներփակ պիտի գտնէք Ե[րուսա]ղ[է]մ.ի *Յովսեփայ Աղբիւրը*: Այս պատկերն ի Գորֆու նկարիչ Ա. Մուրատեանէն⁸⁷ էի ձեռք ձգեր: Կը հաճի՞ք

⁸⁶ Եղիշէ պատրիարքի հիւանդութեան ու ապաքինումի տեղեկութիւնը կը կարդանք *Սիոնի* Փետրուար 1927ի թիւին «Ս. Յակոբի ներսէն» բաժնին մէջ, էջ 64:

⁸⁷ Նկարիչ Աւետիս Մուրատեան ծնած է 15 Ապրիլ 1895ին, Սեբաստիա: Կրթութիւնը կը ստանայ ծննդավայրին մէջ՝ աշակերտելով Վարուժանի, Գաբրիկեանի եւն.: Ա-

լիակատար ծանոթություններ մը կցել անոր վայրին, դիրքին ու հնութեանը մասին, եւ պատկերովը միասին ինձ վերադարձնել: Ասկէ առաջ սխալմամբ Բաբգէն Ա.ի (ամօթով եմ իր մօտ՝ խոստացած յօդուածս ուշացնելու համար) *Աբրահամու աղբիւր* էի ըսեր, եւ Ն. Սրբազնութիւնը «ատանկ տեղ չկայ հոս» ըսեր էր, եւ ամենայն իրաւամբ:

*Հոս ունիմ պատուական բարեկամ մը եւ աշխատակից միանգամայն. անգամ մը ըսի կարծեմ. Գուրգէն Տ. Վարդանեանը: Կ'ուզէ տեղեկանալ ձեր երեքէն մէկէն (դուք, Բաբգէն Ս[րբազան]. եւ կամ Դուրեան պատր[ոհարք].) թէ *Վանապուր անուն ած.ի մը գոյութիւնը կ'ընդունի՞ մեր դիցաբանութիւնը, թէ ոչ զայն կը նկատէ մէկ վերադիրը Արամազդայ:* Երկտող պատասխան մը, խնդրեմ, ինձի գրելիք մէկ յօդուածին առթիւ է: Աղս հատնի՞ վրանիդ կը վազենք այսպէս. ներողամիտ եղէք, սիրելիդ իմ Սրբազան: Մեծարանաց հաւաստեօք՝

Թէոդիկ

ԺԷ.

Նիկոսիա, 21-2-27

Սիրելի Սրբազան Հայր,

Կը հաստատեմ ամսոյս 15 թուակիրս. ի ձեռին ունիմ 8 փետր. թուակիրը՝ ներփակ բացատրականին հետ (Բաբգէն Ա.ի): Ծնորհակալութիւն:- Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր ապաքինման լուրը շատ ուրախացուց զմեզ: Ամէնքնուս աղօթքն անպակաս է՝ իր կատարեալ կազդուրմանը մասին: Մեր աղօթքին չափ նուիրական՝ կայ մանաւանդ Միաբանութեանդ գուրգուրանքը: Մեծ յոյս ունինք որ զարնանաբեր օրերն ալ պիտի նպաստեն իր առողջութեանը:- Թող ինք ողջ ըլլայ եւ զրկէ տարեցոյցս իր թանկագին աշխատակցութենէն: Թերեւս այս յոյս ալ ի սպառ կորած չէ դեռ, եւ Ն. Ամենապատուութիւնը թերեւս կը հրահանգէ ձեզ կամ ձեր մէկ կարգակցին, որ իր թուղթերու գանձարանէն պատրաստ բան մը շնորհով 28ի հատորիս համար: Եւ ասիկա ի մօտոյ նորէն ձեր ձեռքը կը պագնէ: Կը տեսնե՞ք, ո՛րքան յամառ եմ խնդրանքիս եւ յոյսիս մէջ, հակառակ կազմիս տկարութեանը: Մեծարանաց հաւաստեօք եւ մշտանոյն սիրով՝ Թէոդիկ

Յ. Գ. Կրնաք «Ազգապատում» ղրկել նաեւ հաստատութեանս:

ԺԸ.

Նիկոսիա, 20-4-27

Սիրելի Սրբազան Հայր,

պա կ'ուանի Կ. Պոլսոյ Գեղարուեստից բարձրագոյն վարժարանի մէջ: Յեղասպանութեան տարիներուն, շնորհիւ նկարելու տաղանդին, զերծ կը մնայ տեղահանութենէ եւ Ֆերիատ անունով կ'ուսուցչագործէ Սեբաստիոյ գեղարուեստից վարժարանին մէջ: Զինադադարին կ'անցնի Պոլիս, հոնկէ՝ Սուրիա, Պաղեստին, Եգիպտոս, Եւրոպա եւն.:

Նոր հանդիպեցայ ի լրագիրս, թէ անկումի արկած մըն էք անցուցեր: Անցած ըլլայ: Անկումներուն գերադրականը 3½ տարի առաջ ողջունած ըլլալով, գիտեմ թէ ի՞նչ զարհուրելի բան է ատկկա: Կը մխիթարուիմ, խորհելով որ երկուքնուա ալ անկումները շատ հեռի են բարոյական մարզէն, կենդանւո՞յն մահացումէն: Եթէ ժամանակնիդ ու տրամադրութիւննիդ թոյլատու ըլլան, գրէիք ինծի որ եւ է հետք չէ մնացած անկէ, որպէսզի սիրտս հանգստանայ բոլորովին: Բաբգէն Ս.ի քով ամօթով եմ շիտակը: Բառ առ բառ կրկնէիք այս խօսքս Ն. Սրբազնութեան: Բայց եթէ զար ու տեսնար վիճակս՝ ինքը կ'ըլլար ա. մեղքըցողը: Մեղքդ քաշեմ, Աւագ Շաբաթը եւ Զատիկի արծակուրդս անցուցեր եմ գիշերական տքնութեամբ. Փարիզ ձեռագիր հասցնելու անձուկով: Քս. յարեալ ի մեռելոց: Ձերդ՝ Թէոդիկ

[Զախ լուսանցքին] Կը համբուրեմ նաեւ ապաքինեալ Ս. Պատրիարք Հ. Ս. Աջը: Ած լսեց աղօթքս:

ԺԹ.

Նիկոսիա, 17-5-27

Սիրելի Սրբազան Հայր,

Կը հաստատեմ ապր. 20 թուակիրս: Մեծ հաճոյքով ընթերցայ «Արեւ»ի մէջ Ձեր նախագահութիւնը «Արարա»ի *յուշարձանի բացման հանդէսին*, որմէ հասու եղայ թէ բոլորովին ապաքինած էք⁸⁸: Կ'ուզեմ անպայման ունենալ *նոյն յուշարձանին լուսանկարը*: Հերոս Փարիզի կամաւորներու յուշարձանին պատկերն էի դրեր «Մահագրական»իս մէջ՝ պատշաճ յիշատակութեամբ⁸⁹: Չ'ա՞րժեր որ 28իս մէջ նոյնն ընեմ «Արարա»ի համար: Ուստի այդ յուշարձանը եթէ լուսանկարուած է, իմ հաշուոյս օրինակ մը գնէիք եւ *շուրջ* ինծի դրկէիք. իսկ եթէ ոչ՝ իմ հաշուոյս լուսանկարել տայիք եւ *սեւ փայլուն թղթի վրայ* քաշուած օրինակ մը ինծի փութացնէիք: Իս սիրելնուդ ապացոյցը նոր չէ՝ որ պիտի տեսնեմ: Մինչեւ այս պատկերին ինձ ժամանումը՝ պիտի մնամ անձկութեան մէջ: Հոգիս ի դող ընթերցայ նաեւ Ամենապատիւին դանակի տակ պառկիլը: Ած. կատարեալ բժշկութիւն տայ, ուրիշ աղօթք չունինք մեր շուրթերուն վրայ: Բարեւներ իմ հարցնողաց: «Սիոն» հետզհետէ կ'աղուորնայ կոր:

Ձերդ սիրով՝ Թէոդիկ

Ի.

Երուսաղէմ, 1 Յունիս 1927

Սիրելի Պարոն Թէոդիկ,

Ստացայ Մայիս 17 թուակիր Ձեր քարթը: Ստացած եմ նաեւ ժամանակին Փետրուար 15 եւ 21 երկու քարթերնիդ, երբ արկածի մը հետեւանքով անկեալ դնէի ի մահիճս: Քիչ մնաց արկածամահ պիտի ըլլայի, ձախակողման վանդակիս մէկ ոսկորին բեկանումով գործը անուշ տեղը

⁸⁸ Տե՛ս «Արարայի յուշարձանին բացումը», *Արեւ*, 28 Ապրիլ 1927:

⁸⁹ *Ամէնուն տարեցոյցը 1927*, էջ 628:

կապեցինք: Սակայն ես, մանաւանդ սկիզբի օրերը, բաւական սուր ցաւեր ու գալարումներ ունեցայ: Ասոր վրայ աւելցուցէք Սրբազան Պատրիարքի դաժան ու երկարատեւ հիւանդութիւնը, որ մեզ տագնապի ու շփոթի մատնեց, ալ դատեցէք թէ կրնայի՞նք ի վիճակի ըլլալ ուրիշ բաներով զբաղելու: Ասոր համար չեմ կարծեր թէ մեղադրէք զիս, լռութիւնս զանցառութեան վերագրելով: Գանք հիմայ Ձեր գիրերուն:

Սրբազան Պատրիարքը Վանատուր անուն աստուածի մը գոյութիւնը չ'ընդունիր եւ Արամազդի վերադիրը կը համարի, թէեւ, կ'ըսէ, կան ոմանք, որ կը կարծեն թէ եղած ըլլայ այդ անունով աստուած մը⁹⁰:

Կը վերադարձնեն Ձեր ղրկած պատկերը: Տակը գրուած Յովսէփայ Աղբիւրը սխալ է, պէտք է ըլլայ Փիլիպպոսի Աղբիւրը, ինչպէս ճշդած եմ պատկերին ետեւ⁹¹:

Ձեզ համար յատկապէս նկարել տուի Արարայի⁹² Հայ լեգէոնականներու Յուշարձանը, որմէ երկու հատ, մեծ եւ փոքր, կը ներփակեն: Առանձին թուղթի մը վրայ օրինակուած են վրայի արձանագրութիւնները: Ասոնց կցած եմ խմբանկար մը Յուշարձանի բացումէն առաջ: Յուշարձանի կոթողը ծածկուած է Անգղիական, Ֆրանսական եւ Հայկական դրօշակներով: Ներփակ միւս երկու նկարները առնուած են 1925 Հոկտեմբեր 25-ին անցնող հանդիսատար թաղման օրը: Ծանօթութիւնները կարդացէք նկարներուն ետեւի կողմը:

Վիրահատութիւնը կատարելապէս յաջողեցաւ Սրբազան Պատրիարքի վրայ: Վերքը գրեթէ սպիացած է եւ կը յուսամ թէ քանի մը օրէն Ֆրանսական հիւանդանոցէն դառնայ Պատրիարքարան:

Մնամ ջերմագին ողջոյններով,
Աղօթանուէր

⁹⁰ Եղիշէ արք. Դուրեանի նիւթին շուրջ կատարած ուսումնասիրութիւնները հրատարակուած են յետմահու՝ *Հայոց հին կրօնը կամ հայկական դիցաբանութիւն*, տպ. Ս. Յակոբեանց, Երուսաղէմ, 1933, էջ 31-33:

⁹¹ Հակառակ Մեսրոպ սրբազանի ճշտումին, Փիլիպպոսի աղբիւրին անունը նշուած է սխալ՝ «Դաթի աղբիւր» (տե՛ս 1929ի տարեցոյցը, Գուրգէն Տէր Վարդանեանի «Ջրապաշտութիւն» յօդուածը, էջ 329): Հարկ է նշել, թէ 1929ի տարեցոյցի պատրաստութեան ընթացքին՝ 24 Մայիս 1928ին իր մահկանացուն կը կնքէ Թէոդիկ: Տարեցոյցին այս հատուածը պատրաստուած է անոր մահէն ետք եւ պատրաստողները հաւանաբար տեղեակ չէին Թէոդիկ-Նշանեան նամակակցութեամբ կատարուած ճշտումին:

⁹² Արարայի ճակատամարտը տեղի ունեցած է 19 Սեպտեմբեր 1918ին, ֆրանսական բանակի ենթակայութեամբ գործող Հայկական (Արեւելեան) լեգէոնի եւ օսմանեան բանակի միջեւ: ճակատումը աւարտեցաւ հայկական զօրքի յաղթանակով, որուն շնորհիւ դաշնակիցներու՝ Անգլիոյ եւ Ֆրանսայի զօրքերը հասան վերջնական յաղթանակի ու գրաւեցին Պաղեստինը: Հայկական կողմը ունեցաւ 23 նահատակ:

ԻԱ.

Նիկոսիա, 14-6-27

Սիրելի Սրբազան Հայր,

Ի ձեռին ունիմ ամսոյս 1 թուակիր նամակնիդ՝ ներփակ յուշարձանի եւ թաղմանական հանդէսի պատկերներուն հետ: Շատ շնորհակալ եմ որ լիովի գոհացուցիք զիս՝ ի զարդ 28ի հատորիս ատոնք հայթայթելով եւ նահատակներուն անունները միառմի թուելով⁹³: Փիլիպպոսի աղբիւրին ծանօթութիւնն ալ անցուցի. միայն մութ մնաց ինձ սա պարագան թէ, երբ «Բառարան Ս. Գրոց»ը⁹⁴ կ'ըսէ՝ Փիլիպ. սրկւգ. Եթովպացի ներքինիէն կանչուեցաւ եւ զայն դարձի բերաւ, Եթովպիա՝ մկրտած կ'ըլլայ ներքինին՝ թէ Երուսաղէմ: Ինչ որ է, խնդիր չէ, անցեալը միշտ միգամած կ'ըլլայ. «Տիմանը տօղրու չըգարն»⁹⁵: Անցեալ ըլլայ Ձեզի եւ Ամենապատիւին. սրտագին խընդակցութիւններս՝ երկուքնուդ ալ, նաեւ համբոյրներս ձեր սուրբ աջերուն: Յուսամ, հիւանդանոցէն վանք վերադարձած ալ է Ն. Ամենապատուութիւնը: Ձերդ խոնարհ,

Թէոդիկ

ԻԲ.

Նիկոսիա, 29-6-27

Սիրելի Սրբազան Հայր,

Կը հաստատեմ ամսոյս 14 թուակիր քարտս:- Այս տարի շատ ծանձրոյթ առթեցի Ձեզի. ի՞նչպէս պիտի փոխարինեմ, շուարեր մնացեր եմ: Ահա՛ նոր մը.- ... Ձեռք անցուցի հետաքրքրական պատկեր մը որ կը ներկայացնէ *Դամասկոսի «Ամալի» ? մզկիթէն մաս մը՝ Յովի. Մկրտիչի դամբանով, ըստ աւանդութեան,- իսլամաց նշ. ուխտաւորելի*: Կ'ուզեմ լուսաբանուիլ այս մասին: Եթէ դուք կ'անգիտանաք, լրացուցիչ տեղեկութիւններ կարելի՞ է որ քաղէք Դամասկոսի Ձեր տեսուչ վարդապետէն, իսկոյն քարտ մը փութացնելով անոր, քանզի ժմնկ. քիչ կայ:

Այս ծանձրոյթը Ձեզ ուսելուս առթիւ, միտքս կ'իյնայ հայկ. առածը. «Մի՛ տար՝ մի՛ վարժեցներ. տուի՞ր՝ մի՛ դադրեցներ»:

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր Ս. Աջը կը համբուրեմ: Ուրախութիւնն ընդհանուր է: Ն. Ամենապատուութեան պատրաստ ձեռագիրներուն զանձարանէն թղթիկ մը գոնէ պիտի չկրնա՞ք վերցնել իր թոյլտուութեամբ, ի զարդ 28ի հատորիս...: Չօճուգ աղլար՝ տէրտի չէօրէկ⁹⁶: Ձերդ խոնարհ


Թէոդիկ

⁹³ Արարայի յուշարձանի բացման լուսանկարներն ու նկարագրականը հրատարակուած են *Ամէնուն փարեցոյցը 1928*, էջ 647-48:

⁹⁴ *Բառարան Ս. գրոց*, տպ. Ա. Յակոբ Պոյաճեանի, Կ. Պոլիս, 1879:

⁹⁵ Թժք. առած մը, ուղղակի իմաստը՝ ծուխը ուղիղ ըլլայ: Իմաստը՝ շիտակ, լաւ, գեղեցիկ ըլլալը այդքան ալ էական չէ, միայն թէ գործը ձեականօրէն լաւ երեւի, ըստ պատշաճի կատարուած ըլլալը գիտցուի, կը բաւէ:

⁹⁶ Մանուկը կու լայ, ուզածը թխուածք է (թըք.):



Թեոդիկի ձեռագիր նամակներէն մին

ԻԳ.

16 Յուլիս 27

Սիրելի Պարոն Թեոդիկ,


Ստացած եմ անցեալ ամսոյ 14 եւ 19 թուակիր երկու քարթերդ: Ամփջապէս Դամասկոսի մեր Տեսուչ Սուրեն վարդապետ Քէմհաճեանի⁹⁷ գրեցի ու ղրկէ Ձեզ հասցնելու յանձնարարեցի որ տեղոյն Ամալիյէ Մզկիթին վրայ յատմական, աւանդական եւայլն տեղեկութիւններ քաղէ տեղացի իրազէկ անձերէ եւ փութով համար:

Ուրախ եմ որ Վարդապետը յանձնարարութիւնս կատարեց լրիւ ուղարկելով ներփակեալը ու ես կարողացայ միջնորդ ըլլալ ի գոհացումն Ձեր հարցասիրութեան:

Եթովպացի Ներքինիս Փիլիպպոսէն մկրտուած է Պաղեստինի մէջ, Երուսաղէմէն Գազա տանող ճամբուն վրայ, ուր կը գտնուի այժմ Փիլիպպոսի աղբիւրը, որուն նկարը ունիք: «Բառարան Ս. Գրոցին» արժէք մի տաք: Կարդացէք «Գործք Առաքելոցի» Ը գլուխը համար 26-40, այն ատեն Ձեզ համար մութ մնացած կէտը կը պարզուի:

Սրբազան Պատրիարքէն այս տարի բան մի սպասէք: Ինք 15 օրէ ի վեր Յոպպէ կը գտնուի օղափոխութեամբ ու քանի մը

⁹⁷ Ծնած է 1884ին, Կ. Պոլիս: 1907ին կը հասնի Երուսաղէմ, ուր 1918ին կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի, Մկրտիչ արք. Աղանունիի ձեռամբ: 1922-26՝ տեսուչ Պէյրութի, 1926-29՝ տեսուչ Դամասկոսի: Վերադառնալով Երուսաղէմ, կը ստանձնէ պատասխանատու պաշտօններ: 1951ին եպիսկոպոս կը ձեռնադրուի, Գեորգ Զ. կաթողիկոսի ձեռամբ:



օրէն պիտի վերադառնայ: Բայց մենք թոյլ չենք տար որ աշխատի: Թող ժամանակ մը հանգիստ ընէ, մինչեւ ուժերուն վերստանալը:

Ամսոյս 11-ին Պաղեստին երկրաշարժի զօրաւոր ցնցումի մը ենթարկուեցաւ: Անձի կորուստ չունինք, փառք Աստուծոյ, բայց ազգապատկան շէնքեր բաւական վնասուեցան ու չնախատեսուած ծախքերու դուռ բացին: Այսքանով ալ գոհ ենք: Եթէ ժաժը քիչ մը երկար տեւէր կամ կրկնէր, Երուսաղէմ քար քարի վրայ պիտի չմնար:

Ողջունիւ եւ յաջողութեան մաղթանքներով,
Աղօթանուէր
ԻԴ.

Նիկոսիա, 24-8-27

Սիրելի Սրբազան Հայր,

Ի ձեռին ունիմ յս. 16 թուակիրնիդ՝ Ճամի մզկիթին ծանօթագրութեամբը⁹⁸: Խորին

Ստեղծագործական մեքենագիր նամակի նմուշ մը
շնորհակալութիւնս: Արդէն ի՞նչ խնդրած եմ մինչեւ հիմա ու չէք կատարած իսկոյն:

Այլ եւս ծանծաղացած կղզիիս ամալութենէն, անվերջ հաշիւներէ եւ սրտակից բարեկամներու չգոյութենէն, կամովին հրաժարեցայ պաշտօնէս եւ սեպտ. 4ին հոսկէ նաւ պիտի առնեմ, ուղղակի Մարսէյ, հոնկէ ալ Փարիզ անցնելու համար:

Ահա՛ նոր հասցէս. Théotig, Imprimeria “Massis” 280 bis Rue Lafayette, Paris (10) France: Անշուշտ հոն ամբողջ ժամանակ պիտի յատկացնեմ որքան հանգիստիս՝ նոյնքան եւ Տարեցոյցիս: Իցի՛ւ թէ օղը յարմարէր եւ ապրուստ կարենայի ապահովել գրիչիս ծայրովը միշտ:

Ձերդ մշտանոյն սիրով՝ Թէոդիկ
«Սիոն»ս հոն խալել տայիք: Նոյն

⁹⁸ Դամասկոսի Ամալի մզկիթի կամարներու ներքոյ գտնուող Յովհաննէս Մկրտիչի շիրիմի լուսանկարը եւ մզկիթի ու շիրիմի մասին տեղեկութիւնները հրատարակուած են 1928ի տարեցոյցի 537րդ էջին վրայ:

ԻԵ.

[այցեքարտ]

Նիկոսիա, 25-8-27

ԹԵՈՂԻԿ Հաստատելով իր երեկի բացիկը, կը խնդրէ որ նորոգ հանգ. Սիմոն ծ. վ.ի⁹⁹ (Թելեան) լուսանկարը Մեսր. Եպսկ. Նշանեանը բարի ըլլայ ուղարկելու իսկոյն Փարիզ (208, bis, Rue Lafayette):

ԻԶ.

Théotig

Impr. “Massis”

208 bis. Rue Lafayette

Paris (10)

Փարիզ, 20-9-27

Սիրելի Սրբազան Հայր,

Հինգ օրէ ի վեր Փարիզ կը գտնուիմ արդէն, լքած ճգնաւորի կեանքս՝ որ ծանօթ էր Ձեզի: Չգիտնա՞ք թէ հոս տարբեր կենցաղ ունիմ. իմ խեփորիս մէջ ապաստանած եւ շնչելով Տպարանիս սեւ մելանին անուշ հոտը՝ կը տքնիմ կոր նորէն, կերպարանելու համար 28ի հատորս: Իցի՛ւ թէ կլիման ինծի յարմարէր ու չբաժնուէի այս «լոյսի քաղաք»էն: Չեմ հաշտուած դեռ շրջասփիտիս. ցնցումը շատ զօրաւոր եղած է. հինին ու նորին տարբերութիւնը վիթխարի է:

*Հրաշեաս զոր 1903էն ի վեր կը ճանչնամ իր բարի սրտին ու իրեն հետ ունեցած մտերմութեամբս ու գործառնութեամբս, պատճառ եղաւ որ հրաժարիմ կիպրական կեանքէս ու նետուիմ հոս՝ կուտեմպէրկեան արուեստին ունեցած սիրոյս գոհացում տալու համար, սէ՛ր որ տարիներէ ի վեր ականայ ընդհատուած էր: Խենդութիւն էր, գուցէ, իմ ըրածս. բայց յառաջացած տարիք ունեցողներու խենդութիւնը կ'ունենայ լրջութեան կողմ մը անշուշտ: Հըրաշեաս զձեզ կը ճանչնայ հանգուցեալ Օրմանեան Ս.ի միջոցաւ, որ յաճախ Ձեր խօսքը կ'ընէ եղեր իրեն, իբրեւ մին միաբանութեանդ արժէքաւոր անդամներէն: Այնպէս որ երբ Ձեր խօսքը բացուեցաւ, մօտէն ծանօթի մը պէս արտայայտուեցաւ Ձեր մասին:

⁹⁹ Ծնած էր 1870ին, Կ. Պոլիս: Կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի 1898ին, Երուսաղէմ: Տեսչական պաշտօններ կը վարէ Ս. Աթոռէն ներս: Մահագրականը հրատարակուած է 1928ի տարեցոյցին մէջ, էջ 651-52, առանց լուսանկարի:

Հրաչեայ Տէր Ներսէսեան¹⁰⁰, ինչպէս յայտնի է Ձեզի, ի Պոլիս թէ՛ տպարանատէր էր եւ թէ արտօնատէր, տնօրէն «Վերջին լուր»¹⁰¹ որ այժմ եւս կը շարունակուի «Նոր լուր»¹⁰² նոր անուան տակ,- նոյն ատեն մօտիկ ազգականը¹⁰³ Օրմանեան Ս.ի՝ որուն քեռորդիներուն (Պօղոսի եւ մանաւանդ Արաքսիի ու Սիրարփի Տէր Ներսէսեաններու¹⁰⁴) շահերուն պաշտպանութիւնը ստանձնած է: Այս առթիւ ինծի շատ շահեկան խնդիր մը հաղորդեց. ատոր կարելութիւնը նկատի առնելով, ես ալ կը փութամ Ձեզի պարզել զայն եւ խնդրել որ Ձեր կարելին ի գործ դնել՝ այդ խնդրոյն լաւագոյն վերջ մը տալու համար:

Խնդիրը այս է.- Օրմանեան Ս. Երուսաղէմէն մեկնելու պահուն¹⁰⁵, բաց ի իր ձեռագիրներէն, Ձեզի ձգած է կարգ մը գոյքեր եւ արժէքաւոր առարկաներ: Այս մասին Դուք, Գայըզեան¹⁰⁶ եւ Տէրտէրեան¹⁰⁷ Եպս.ներ ստորագրած եւ Օրմանեան Ս.ի քեռորդիներուն ղրկած էք երկու նամակ, ըսելով թէ յիշեալ գոյքերը Ձեր քով աւանդ կը գտնուին եւ զայնս պիտի հասցնէք իրաւատէրերուն առաջին պատեհութեամբ: Այս նամակներուն թուականներն են 24 յնվր. 1917 եւ 15 դեկտ. 1918:

¹⁰⁰ Ծնած էր 1881ին, Կ. Պոլիս, ուր յաճախած է Բերայի աստրիական ու գերմանական վարժարանները: Տպագրական գործին հմտանալու համար քանիցս ուղեւորուած է Երուսա: Երէց եղբոր՝ Վահրամի հետ հիմնած են Վ. եւ Հ. Տէր Ներսէսեան տպարանը, ուր հրատարակած են կարեւոր գիրքեր:

¹⁰¹ Հրատարակուած է Կ. Պոլիս, 1914-24ի միջեւ: Խմբագիրներու շարքին եղած են Երուանդ Օտեան, Յակոբ Տէր Յակոբեան, Յովհաննէս Ասպետ, Վահան Թոշիկեան եւն.:

¹⁰² Հրատարակուած է Կ. Պոլիս, 1924-54 շրջանին: Արտօնատէրը եղած է Վարդան Թովմասեան, խմբագիրը՝ Վահան Թոշիկեան, Ջարեհ Նեմցէ, Աբիկ Մուպահեանեան եւն.:

¹⁰³ Հրաչեայ Տէր Ներսէսեան Մաղաքիա արք. Օրմանեանի քրոջ՝ Ագապիի կեսրար-թոռն էր:

¹⁰⁴ Մաղաքիա արք. Օրմանեանի քոյրը՝ Ագապի (1861-1905), ամուսնացած էր Միհրան Տէր Ներսէսեանի (1857-1914) հետ: Ջոյգին անդրանիկ զաւակը՝ Պօղոս-Վահան ծնած էր 1892ին, Արաքսիա-Իսկուիի՝ 1894ին եւ անուանի արուեստաբան, բիւզանդագէտ ու հայագէտ Սիրարփի-Վերոնիկէ՝ 1896ին:

¹⁰⁵ Օրմանեան, որ Երուսաղէմ կը գտնուէր Ազգային վարչութեան կողմէ որպէս լիազօր պատուիրակ, իոնկէ կը հեռանայ պետական հրամանով, Նոյեմբեր 1917ին:

¹⁰⁶ Ծնած է 1861ին, Կ. Պոլիս, աւազանի անունը՝ Պետրոս: 1886ին կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի Երուսաղէմ: Պատասխանատու պաշտօններ կը վարէ Ս. Յակոբեանց վանքէն ներս, տարբեր թուականներու ստանձնելով նաեւ կալուածոց եւ ելեմտից տեսուչի պաշտօնները: Եպիսկոպոս կ'օծուի 1924ին:

¹⁰⁷ Դաւիթ վրդ. Չնքուշի, ծնած է 1872ին, ձեռնադրուած՝ 1898ին, 1907-21՝ եղած է աւագ լուսարար: 1 Սեպտեմբեր 1921ին իր յարկաբաժնին մէջ դաշունահարուած է մարաշցի Սարգիս Յարութիւնեան երիտասարդին կողմէ ու մեռած՝ 4 Սեպտեմբերին:

Այդ թուականներէն ի վեր զարմանալի է որ ո՛չ Դուք միջոցը գտած էք այդ աւանդը յանձնելու իր տէրերուն, եւ ոչ ալ զանազան անձերու միջոցաւ զանազան ատեններ, երբ Ձենէ պահանջուած է, յանձնած էք:

Այդ գոյքերուն մէջ կը գտնուէին, բաց ի զգեստեղեններէ, գորգէ, Սրբազանին ականակոտ պատուանշանները եւ խաչը: Երբ այս վերջիններուն մասին Հրաչեայի եղբօր՝ Տիրան Տ. Ներսէսեանի կողմէ (Պէյրութ գտնուած միջոցին) դիմում եղաւ Միաբանութեանդ, պատասխանուած է անիմանալի կերպով, թէ այդ պատուանշանները պէտք է թուրք կառավարութեան վերադարձուին!... Այս կէտերը երբ իմացայ Փարիզ հասնելուս, խորհեցայ իւրովի «Երբէ՞ն ի վեր Երուսաղէմի Հայ Վանքը թուրք կառավարութեան շահերուն պաշտպան հանդիսացած է, մինչդեռ Ձեր եւ Ձեր կարգակիցներէն երկուքին ստորագրութեամբ նամակներ կան՝ թէ անոնք աւանդներ են Ձեր քով եւ որքան իմ խելքս կը հասնի, աւանդը միայն իրաւատէրերուն կը յանձնուի, աւանդ որուն վրայ հանգուցեալ Սրբազանը իր իսկ ձեռքով գրած է թէ ի դէպ մահու անոնք պիտի յանձնուին իր քեռորդիներուն»: Պարագա՛յ՝ զոր դուք կը հաստատէք արդէն ձեր վերոգրեալ 2 նամակներով:Վերջապէս, սիրելի Սրբազան Հայր, այս մասին Հրաչեայ Տ. Ներսէսեան 9 յնս. 1927 թրականաւ թէ՛ Տնօրէն Խորհուրդիդ եւ թէ Ս. Պատրիարք Հօր զատ զատ նամակներ գրած է, եւ զարմանալի է որ ատոնց պատասխանները չէ ստացած դեռ, ինչ որ տարրական քաղաքավարութեան պահանջն էր գոնէ...:

Սիրելի Սրբազան Հայր, այս տողերը Ձեզի գրելով, նպատակս շատ պարզ է: Ձեմ ուզեր որ Ձեր սիրելի անունը խնդրոյ նիւթ դառնայ. եւ ես վրստահ եմ որ եթէ այս խնդիրը միմիայն Ձեր անձէն կախեալ ըլլար, մինչեւ հիմա վաղուց կարգադրուած կ'ըլլար: Ո՞վ է արդեօք այս խնդրոյն մէջ խոչնդոտ հանդիսացող եւ դուք չէք կրնար հարթել զայն: Հրաչեան նեղսրտած այսքան ատեն իր դիմումներուն ապարդիւն մնալէն, առաջադրած էր հրապարակային եւ օրինական միջոցներու դիմելու, բան մը զոր առկախեցի՝ մինչեւ Ձենէ ստանալիք պատասխանս:

Անձկագին սպասմամբ Ձեր պատասխանին, կը մնամ Ձերդ մշտանոյն սիրով՝

Թէոդիկ

ԻԷ.

Imprimerie MASSIS
Tous Travaux en Typographie
Éditions
208 bis. Rue Lafayette, Paris (10)

Paris, le 14 հոկտ. 1927

Սիրելի Սրբազան Հայր,

Կը հաստատեմ նախորդ նամակս՝ զոր հոսկէ էի գրեր:Վեանքս հոս զարմանալի դարձաւ: Ունիմ գրաշարատան կից «լուցկիի տուփ» խցիկ մը

անպատուիան, ուր ելեկտր. լոյսով կ'աշխատիմ միայն, հոն կը ննջեմ ու հո'ն կը ճաշեմ: Աճ. ինձի համբերութիւն տայ սա *սին* տարօքս...:

*Գրաշարս հոս ունի առժամեայ օգնական մը, *Յարութիւն Թաշճեան* անուամբ: Այս երիտասարդը եղբօրորդին է եղեր Միաբանութեանդ անդամներէն Տ. Յակոբ վրդ. Թաշճեանի¹⁰⁸: Ինքը գրեթէ անգործ կը սեպուի տիրող քրիզին հետեւանօք, եւ շատ գէշ կ'ապրուի, մանաւանդ որ իր մայրը Ամերիկա դրկելուն առթիւ ծախսեր ըրած ըլլալով՝ դեռ կը հեծէ պարտքերու տակ, ինձի աղաչեց որ ուղղակի գրեմ իր հօրեղբօր՝ Թաշճեան Հայր Սուրբին, բայց զինք յանուանէ միայն կը ճանչնամ: Ուստի արգահատելով իր կացութեան՝ ներկայս կը գրեմ Ձեզ, խնդրելով որ դուք բարեխօս ըլլաք յիշեալ Հայր Սուրբին մօտ, եւ իր եղբօր թշուառ վիճակը պարզելով՝ յաջողիք ղրկել տալ իրեն կարեւոր գումար մը՝ որուն իսկապէս անհրաժեշտ պէտք ունի այս երիտասարդը: Ինքը բնաւ ծոյլ մէկը չէ, բայց գործերը սակաւ ու կայուն ըլլալուն՝ շատ կը նեղուի եւ հիմա *առժամապէս* կ'աշխատի հոս, գրեթէ կէս թոշակով: Իցի՛ւ թէ պանդխտութեան մէջ գտնուող այս տղուն համար կարենայինք օգնութիւն մը փութացնել շուտով, ես՝ իմ գրովս, դուք՝ Ձեր լեզուովը որուն ազդեցիկ ըլլալուն վստահ եմ:

Գիրքս գալ շաբթու կ'աւարտի, ես ալ հետը...

Ձերդ միշտ անկեղծ
Թէոդիկ

ԻԸ.

Երուսաղէմ, 17 Հոկտեմբեր 1927

Սիրելի Պարոն Թէոդիկ,

Ընդունած եմ Օգոստոս 24 թուակիր քարթերնիդ Կիպրոսէն եւ Սեպտեմբեր 20 թուակիր նամակնիդ Փարիզէն:

Ուրախ եմ ինձ հետ նաեւ տեղիս Ձեր բարեկամները Նիկոսիայի անձուկ շրջանակէն ու ամայութենէն ազատելով փոխադրուելնուդ համար համաշխարհային ոստանը Փարիզ, ուր տարակոյս չկայ թէ լիովի գոհացում պիտի կրնաք գտնել Ձեր գրական հակումներուն, մօտէն հսկելով մանաւանդ յառաջիկային տպագրելի Ձեր ՏԱՐԵՑՈՅՑ-ներուն: Կ'ըսեն թէ Փարիզի մթնոլորտը ծերերն իսկ երիտասարդացնելու հրաշագործ զօրութիւնն ունի: Սըրտագինս կը մաղթեմ Ձեզ լիակատար առողջութիւն ու երիտասարդական ուժ ու կորով, եռանդ ու ոգի, որպէսզի ամէն տարի ՏԱՐԵՑՈՅՑ-ներուդ միջոցաւ Ամանորի սեղաններ պատրաստէք յաւելեալ եւ ճոխացեալ համադամներով: Ձեր բարեկամներն ու համակիրներն ալ անշուշտ մօտէն կամ հեռուէն կը ղրկեն սեղանիդ աղաղակն ու համեմները:

Գանք նամակիդ էական խնդրոյն: «Հանգուցեալ Օրմանեան Սրբազան ճիշդ է որ ինձ եւ Մատթէոս եպիսկոպոսի ու Հանգուցեալ Դաւիթ Ծայրա-

¹⁰⁸ Ծնած է 1878ին, Կ. Պոլիս: Ձեռնադրուած էր 1913ին: 1927ին կը վարէր Յոպպէի տեսչութիւնը:

գոյն վարդապետի յանձնած էր գոյքերը քեռորդիներուն (Պօղոս, Արաքսի եւ Սիրարփի) ձեռքն հասցնելու պաշտօնը, եւ մենք ժամանակին այս պարագան նամակներով տեղեկացուցինք յիշեալներուն: Բայց անոնք այդ մասին մեզի հետ որեւէ յարաբերութիւն չունեցան ու մէկէ աւելի անգամներ գրեցին Ամենապատիւ Սրբազան Պատրիարքին, այն ալ ոչ ուղղակի իրենք, այլ Հրաչեայ ու Տիրան Տէր-Ներսէսեաններու եւ այլոց միջոցաւ: Ես ու Մատթէոս Սրբազան (Դաւիթ վարդապետ վախճանած էր) տեսնելով որ այդ մասին Սրբազան պատրիարք Հօր հետ բանակցութիւններ կ'ըլլան, ամենայն ինչ յանձնեցինք Նորին Ամենապատուութեան, զգեստեղէնները, ըստ իրենց հրահանգին, աղքատներու բաժնելէ ետք: Հիմայ խնդիրը կը մնայ միմիայն Հանգուցեալի Խաչ նշանին ու պետական պատուանշաններուն վերայ, որովհետեւ ձեռք քաշած են եղեր նաեւ գիրքերէն ու գրութիւններէն, որոնք նաեւ յանձնուած են Սրբազան Պատրիարքի: Պատուանշաններն են հետեւեալները.- Պարսկական Շիրի Խուրշիտ¹⁰⁹, Մեծիտիյէ Ա¹¹⁰, Օսմանիյէ Ա¹¹¹, Նոյնին ականակուող ու Իմթիյազի¹¹² ոսկի եւ արծաթ մետալլներ: Ունի նաեւ լանջախաչ մը, որ հազիւ 4-5 ոսկիի արժէք ունի, որովհետեւ քարերը ամբողջութեամբ կեղծ են: Սակայն ըստ օրինի հոգեւորականի մը խաչը անպայման կը պատկանի եկեղեցիին: Հանգուցեալ Սրբազանն իւր խաչը ժամանակին ստացած է Ամենայն Հայոց Կաթողիկոսէն, եւ, ինչպէս կը հաւաս-

¹⁰⁹ Իրանի խորհրդանիշը համարուող արեւի ու առիւծի այս շքանշանը հաստատած էր Ֆեթի Ալի Շահ (1772-1834) եւ կը տրուէր բարձրաստիճան պաշտօնեաներու, օտարերկրեայ դեսպաններու ու զինուորականներու:

¹¹⁰ Օրմանեան առաջին կարգի Մեծիտիէ շքանշանը ստացած էր պատրիարք ընտրութենէն (6/18 Նոյ. 1896) ու վաւերացումէն (17/29 Նոյ. 1896) կարճ ժամանակ ետք՝ 29 Դեկտ. 1896/10 Յունր. 1897ին, Սուլթան Ապտիլիհամիտէն: Շքանշանը հաստատուած էր 1852ին, Սուլթան Ապտիլմեծիտի օրօք: Այս շքանշանը սովորաբար կը յանձնուէր նաեւ նորընտիր պատրիարքներուն, իրենց գահակալութեան առթիւ:

¹¹¹ Օրմանեան այս շքանշանը ստացած էր Սուլթան Ապտիլիհամիտէն, վերջինիս գահակալութեան տարեդարձին առթիւ, 19/31 Օգոստոս 1897ին: Շքանշանը հաստատած էր Սուլթան Ապտիլազիզ, 1861ին (Մաղաքիա արք. Օրմանեան, *Խոհք եւ խօսք*, Երուսաղէմ, 1929, էջ 179):

¹¹² Շքանշանը հաստատած էր Ապտիլիհամիտ Ա., 1780ականներուն: 1878ին շքանշանը վերստին սկսաւ շնորհուիլ Ապտիլիհամիտ Բ. սուլթանի կողմէ:

տեն Արմաշական միաբանները¹¹³, իրենը Միքայել Սալանթեան¹¹⁴ եւ Գաբրիէլ Այվազովսքի¹¹⁵ եպիսկոպոսներուն (երկուքն ալ նախկին հռոմէականներ) յառաջագոյն գործածածներն են եղեր: Հետեւապէս այդ լանջախաչը կամ հոս կը մնայ կամ կը վերադառնայ Մայր-Աթոռ: Իսկ եթէ Սրբազան Պատրիարք հաւանի պատուանշանները ուղարկել, այդ պարագային հարկ անհրաժեշտ է որ երեք ժառանգորդներու (Պօղոսի, Արաքսիի ու Սիրարփիի) կողմէ ստորագրեալ եւ օրինական Մարմինէ մը վաւերացեալ փոխանորդագիր մը տրուի այն անձին, որուն կը յանձնուի ստանալ թողօնները: Բնական է որ հնարաւոր չէ գոհացում տալ այս կամ այն մէկու դիմումին երբ ինքնամատոյց կ'ըլլայ մէկ կամ միւս ժառանգորդի անունով: Ասիկա կը գըրեմ ոչ-պաշտօնապէս, այլ ուղղակի իմ կողմէ: Եթէ յիշածս օրինական պայմանները լրացուին, ես ալ կարելիս կ'ընեմ պետական պատուանշանները Հանգուցեալ Օրմանեան Սրբազանի քեռորդիներուն հասցնելու համար: Թէեւ այդ պատուանշաններն ալ այնքան արժէք մը չեն ներկայացներ: Արծաթի գինն են միայն, բացի Իմթիյազի ոսկի մետալլէն եւ ականակոտ Օսմանիյէի գնդասեղի գլխու մեծութեամբ մաս մը ակունքներէ»:

Սիրոյ եւ յարգանաց ողջոյններ Ձեզ եւ Մեծ. Պ. Հրաչեայի:

Աղօթանուէր

ԻԹ.

Imprimerie MASSIS
Tous Travaux en Typographie
Éditions

¹¹³ Արմաշու դպրեվանքը հիմնադրուած է 1889ին, Կ. Պոլսոյ մօտակայ Նիկոմիդիոյ գաւառի Արմաշ գիւղի Չարխափան Ս. Աստուածածին վանքին մէջ, Կ. Պոլսոյ Խորէն Աշըքեան պատրիարքի շրջանին, Մաղաքիա արք. Օրմանեանի տեսչութեամբ: Դպրեվանքի յայտնի շրջանաւարտներէն էին Կիլիկիոյ Բաբկէն Կիլեսերեան աթոռակից-կաթողիկոսը, Զաւէն Տէր Եղիայեան, Թորգոմ Գուշակեան, Մեսրոպ Նարոյեան, Գարեգին Խաչատուրեան եւն. պատրիարքները: Դպրեվանքը գոյութիւն ունենալէ կը դադրի 1915ը յաջորդած շրջանին:

¹¹⁴ 1782ին ծնած է Կ. Պոլիս: Ուսում ստացած է նախ Լիբանանի Ս. Անտոնի վանքէն, ապա Մխիթարեաններու Ս. Ղազարէն: 1822ին վերադարձած է Հայց. Առաքելական եկեղեցոյ գիրկը: Ուսուցչագործած է Մոսկուայի Լազարեան ճեմարանին մէջ, որու տեսչն ալ եղած է: Հեղինակ է լեզուական, կրօնական եւն. հրատարակութիւններու: Վախճանած է 1851ին, Մոսկուա:

¹¹⁵ Ծնած է 1812ին, Թեղդոսիա: 1826ին կը դրկուի Ս. Ղազարու վանքը, ուր կը ստանայ իր կրթութիւնը եւ կուսակրօն քահանայ ձեռնադրուելով (1834) կը միանայ Մըխիթարեան միաբանութեան: 1843ին կը դառնայ *Քազմավէպի* հիմնադիր-խմբագիրը: 1856ին կը վերադառնայ Մայր եկեղեցոյ գիրկը: 1867ին եպիսկոպոս կը ձեռնարուի Մայր աթոռի մէջ: Հեղինակ է պատմական, բանասիրական, կրօնական ուսումնասիրութիւններու: Վախճանած է 1880ին, Թիֆլիս, ուր առաջնորդական պաշտօն կը վարէր: Յայտնի նկարիչ Յովհաննէս Այվազովսքիի եղբայրը:

Սիրելի Սրբազան Հայր,

Ա՛խ, ո՛րքան ամօթով մնացի քովերնիդ, գալես ի վեր 2 նամակ գրեցի, երկուքին ալ իսկոյն գոհացում տուիք, ու դեռ ես պիտի պատասխանեմ:

Ըսեմ իսկոյն թէ ա. նամակիս նիւթն էր Տէր-Ներսէսեանի ժառանգականը՝ զոր համարձակած էի գրել, պարզապէս խնդրանքի մը բաւարարութիւն տուած ըլլալու համար: Պատասխաննիդ Պրն. Հրաչեայ ստացաւ շնորհակալութեամբ, իբր իրեն սեպհական նամակ, ու պիտի պատասխանէ ի մօտոյ: Բ. նամակս նոյնպէս ձանձրոյթ մըն էր, ձեր միջոցաւը Թաշճեան Հայր Սուրբի հաղորդելիք: Նոյնպէս «խաթար պէլասը»¹¹⁶. իր երթորորդիէն դեռ առջի օր իմացայ թէ Հայր Սուրբը հաճեր է իրեն հանել 2 անգլ., իր նեղ օրին համար: Ո՛րչափ ուրախ եմ որ ցարդ անգործ՝ տպարանէ տպարան դեգերող այդ Հայորդին ի վիճակի եղաւ այդ գումարով սենեակի եւ այլ վարձուց պարտքերը տալու եւ մասամբ խեղճ չմնալու: Ես ալ իմովսեանն իրեն օգնեցի: Իցի՛ւ թէ ի մօտոյ տպարան մը մտնէր եւ ինքզինքը ազատէր:

Այսօր շնորհակալութեամբ ստացայ նոր տարւոյ ձեր արմաղանը, ներփակ քարտիկով, եւ սիրտս ալ հանգստացաւ որ 28ի -30- հատորներս անկորուստ եկեր գտեր են Ձեր Սրբազնութիւնը: Ըստ սովորականին, բարի եղէք Ձեր արդար իրաւունքը վար դնել, եւ մէյմէկ օրինակ նուէր տալ իմ կողմէս Ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր եւ Բաբգէն Ս.ի, իսկ մնացեալ -27- օրինակը տեղաւորել Ձեր ծանօթներու լայն շրջանակին մէջ: Ձեր առողջութեան համար իմ աղօթքովս կը բաւականանաք անշուշտ, ցորչափ կը ճանչնաք սիրտս:

«Մէկ աչքերնիդ լայ՝ միւսն ալ խնդայ»- ինչպէս կ'ըսուի Պոլսի հայեվարով,- ի՛նչ պիտի ընէք չընէք, աշխատակցութիւննիդ պիտի շնորհէք կրկին, մինչեւ յառաջիկայ Մարտ ինձ փութացնելով որեւէ պատմական եւն. նիւթի շուրջ ձեր շահեկան յօդուածը, նաեւ թանկագին ձեռագրի մը որոնումն ու ընդօրինակութիւնը (որ վար չմնայ Խրիմեան Հայրիկէն): Լ. Բաշալեան¹¹⁷ «ո՛ր տեղերէն ալ կը գտնես ասանկ թանկագին ձեռագիրներ» ըսաւ ինձ, եւ ես իմ հպարտութեամբս չգոհացայ միայն, այլ եւ զայն Ձեզի պարտական ըլլալս եւ Ձեզի պէս եկեղեցականի մը լայն համակրութիւնը վայելելս խոստովանեցայ: Գիտեմ թէ -առանց տեսած ըլլալու- ձեր դիւանը շատ ճոխ է. խնդիրը մէջը մտնելուն եւ ճաշակաւոր քաղ մը ընելուն մէջ կը կայանայ: - Ասկէ զատ, 28ի հատորս *մահրում*¹¹⁸ մնաց Ամենապատիւ Ս. Պատրիարք

¹¹⁶ Նեղութիւն մը, որ յանձն առնուած է յարգելի անձի մը փափաքին ընդառաջելով (թրք. ասոյթ):

¹¹⁷ Արեւմտահայ արձակագիր, հրապարակագիր, հանրային գործիչ, ծնած Կ. Պոլիս 1868ին եւ մեռած Փարիզ, 1943ին:

¹¹⁸ Զրկուած (թրք.):

Հօր մէկ գրուածքէն՝ իր հիւանդութեանը հետեւանօք: Հիմա որ Ն. Ամենապատուութիւնը շատերնուս աղօթքովը կազդուրուած է բոլորովին, Ձեր ճիտին պարտքը կ'իյնայ առնել իրմէ յօդուած ու քերթուած, հին տարուան աճին ալ հանելով¹¹⁹: Ես վստահ եմ որ Եղիշէ Արքեպիսկ.ի դարակը լի է պատրաստ ձեռագիրներով: Աչքս ետեւ չէք թողուր անշուշտ:

-Տեսաք անշուշտ որ 28ի հատորիս սկիզբը կար Վեհ.ին կենդանագիրը: 29իս սկիզբը պիտի գետեղեմ Եղիշէ Ս. Պատրիարք Հօր կենդանագիրը, նոյն քօսով, վեղարաւոր եւ գաւազան ի ձեռին: Ա. Խաչատուր¹²⁰ սիրով կը լուսանկարէ հոդ ուզածս, իրեն ալ գրեցի արդէն: Այս խնդրանքս ալ չէք ուշացներ: -Ներփակ է Բաբգէն Ս.ի ուղղեալ մէկ քարտս: Դուք ալ վրայ տալիք, եւ մինչեւ Փետրվար մէկ Ն. Սրբազնութիւնը բարեհաճէր ձեռագիրը խաւել:

*Իմ կեանքս հոս կ'անցնի խաղաղ, հակառակ մայրաքաղաքիս խառնակ կեանքին: Տպարանին վերեւ՝ խեղճուկ խցիկի մը մէջ եմ քաշուած եւ առտուրնէ մինչեւ իրիկուն գրիչ կը շարժեմ նորէն: Ո՛չ մէկ տեղ կրցած եմ այցելել դեռ, ո՛չ մէկ մուսէոն, ո՛չ մէկ թատրոն, քանզի վերի ու վարի ճամբաները լաբիրինթոս են կաղասրուն անձիս համար: Միակ հաճոյքը զոր ունիմ՝ *ժամանակին*՝ իմս ըլլալն է, եւ հիմա մէկ տիրոջ միայն կը ծառայեմ, Տիկին Գրականութեան: Իցի՛ւ թէ ան ապերախտ չգտնուէր սիրոյս հանդէպ ու զիս չմեռնելու մը չափ ապրեցնէր:

Ձերդ մշտանոյն սիրով եւ ... ամանորի բարեմաղթութեամբ
Թէոդիկ

L.

Երուսաղէմ, 7 Դեկտեմբեր 1927

Սիրելի Պ. Թէոդիկ,

Մեծագոյն հաճոյքով ընդունեցայ 24 Նոյեմբեր ամսաթիւ Ձեր նամակը ու ներփակ քաղթը յանձնեցի Բաբգէն Սրբազանի:

Պատրիարք Սրբազանի վերաբերեալ տողերը անձամբ կարդացի իրեն, պատասխանը եղաւ նուրբ ու անուշիկ ժպիտ մը, ինչոր ես բարեացակամ արտայայտութիւն համարեցի եւ կը յուսամ թէ ճիտիկդ ծուռ չի ձգեր: Նորին Ամենապատուութիւնը թելադրեց ինձ գրել Ձեզ թէ ՏԱՐԵՅՈՅՑ-իդ հատորները շատցան, ու կարելոր գրութիւն մը փնտռելու համար մեծ դժուարութիւն կը քաշուի: Ինչ լաւ պիտի ըլլար, կ'ըսէ, եթէ գլխաւոր յօդուածներու ընդհանուր մէկ Ցանկը հրատարակուէր հեղինակներու անուններով, ինչոր

¹¹⁹ «Վրէժը լուծել» (թրք. առած):

¹²⁰ Արամ Խաչատուրեան, ծնած է 1868, Կ. Պոլիս, Գաւրգիւղ: 1906ին հաստատուած է Երուսաղէմ, ուր շարունակած է գեղանկարիչի իր ասպարէզը: Ուսուցագործած է տեղոյն Ժառանգաւորաց ու Ս. Թարգմանչաց վարժարաններէն ներս: Մահացած է 1936ին:

մեծ դիրքություն պիտի ընծայէր որոնումներ ընողներուն: Սրբազանի այս թելադրութիւնը ահա կը հաղորդեմ Ձեզ¹²¹:

Ներկակ պիտի գտնէք երեք պատճէներ իմ կողմէ օրինակուած իմ տրամադրութեանս տակ եղած գրութիւններէն: Երեքն ալ մաս կը կազմեն Հայրիկեան նամականիի: Առաջինն է ՄՇԱԿ-ի¹²² խմբագիր Գրիգոր Արծրունիի¹²³ գրուած նամակ մը ի պատասխան իր ծննդեան եօթանասնամեակի առիթով յղած շնորհաւորական հեռագրին: Երկրորդը նամակ մը Վիեննայի Պարսկական դեսպան Նարիման Խանի¹²⁴ եւ երրորդը Կոնդակ մը Մանչեսթըրի Հովիւ Սուքիաս վարդապետ Պարոնեանի¹²⁵ եւ տեղւոյն Հայ համայնքին ուղղեալ: Վերջին երկուքը կը պատկանին Հայկական խնդրին, որ հրատապ կերպարանք մը առած էր 1894-ի Սասունի կոտորածներէն¹²⁶ ետք: Կը յուսամ թէ գոհ պիտի մնաք այս պատճէներէն երկու տեսակէտով, նախ որ մեծանուն Հայրապետին անտիպ նամակները լոյս աշխարհ կ'ելլեն եւ երկրորդ նոր լոյսեր կը սփռեն մեր ժամանակակից պատմութեան վրայ: Այսպէսով ՏԱՐԵՑՈՅՑ-ներդ կամաց կամաց կոկիկ *յօսիէ* մը կը դառնան կոր Հայրիկեան նամակներու: Գալ տարրուան համար ալ Քէնթըրպրիի արքե-

¹²¹ Դժբախտաբար Թէոդիկի *Ամէնուն տարեցոյցը*ի հատորներուն համար կազմուած ընդհանուր մատենագիտութիւն մը գոյութիւն չունի ցարդ: Սակայն 2006էն սկսեալ, յաջորդական տարիներուն, Հալէպի մէջ հրատարակուած *Ամէնուն տարեցոյց*ները օժտուեցան անձանուններու, տեղանուններու ու բովանդակութեան ցանկերով, հալէպահայ մտաւորական Լեւոն Շառոյեանի աշխատասիրութեամբ:

¹²² Հասարակական-քաղաքական, գրական թերթ, որ 1872-1921՝ հրատարակուած է Թիֆլիս:

¹²³ Մշակ թերթի հիմնադիրն ու առաջին խմբագիրը, ծնած է 1845ին Մոսկուա, ազնուական ընտանիքի մը մէջ: Բարձրագոյն ուսումը ստացած է Հայտելպերկի համալսարանին մէջ: 1872ին հիմնադրած է *Մշակը*: Մեռած է 1892ին:

¹²⁴ Պարսկահայ դիւանագէտ, որ Աստրո-Հունգարական կայսրութեան մէջ եղած է Իրանի դեսպանը, 1879-1903ին:

¹²⁵ Ծնած է 1831ին, Կ. Պոլիս: Կրթութիւնը ստացած է Վենետիկի Մխիթարեանց քով: 1854ին կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի: Մաղաքիա Օրմանեանի եւ այլոց հետ կը վերադառնայ Ազգային եկեղեցոյ գիրկը: Կատարած է նաեւ պատմաբանասիրական ուսումնասիրութիւններ: Վախճանած է 1903ին ու թաղուած՝ Մանչեսթըրի մէջ, ուր երկար տարիներ վարած էր հովուական պաշտօն:

¹²⁶ Օսմանեան զօրաբաժին մը, Ձեքի փաշայի գլխատրութեամբ, կը պաշարէ Սասունը: Սասունցիները Մեծն Մուրատի գլխատրութեամբ ինքնապաշտպանութեան կը դիմեն: Հակամարտութեան ընթացքին պետական զօրքերը կ'աւերեն անոնի քան քառասուն գիւղ ու կը կոտորեն անոնի քան տասը հազար հայ: Սասունի դէպքերը կ'արժանանան միջազգային ուշադրութեան: Բրիտանիա, Ֆրանսա ու Ռուսաստան Օսմանեան կառավարութեան կը ներկայացնեն Պերլինի դաշնագրէն բխող բարեփոխումներու կատարման ծրագիր մը, որ պատմութեան յայտնի է Մայիսեան բարենորոգումներ անունով (1895):

պիսկոպոսին¹²⁷ ուղղեալ Կոնդակը պիտի դրկեմ, ինչպէս ծանօթագրած եմ ընդօրինակութեանս ներքեւ:

Ղրկածս ծոցի Օրացոյցին¹²⁸ մէջ զետեղած քառթովս տեղեկացուցած էի 1928-ի ՏԱՐԵՑՈՅՑ-ներէդ 30 օրինակներ ստանալս: Ձեր յանձնարարութեան համեմատ մէկը անձամբ ներկայացուցի Սրբազան Պատրիարք Հօր իբրեւ Ձեր Ամանորի արմաղանը եւ մէկը յանձնեցի Բաբգէն եպիսկոպոսի: Ինծի նուիրուած հատորին համար խորին շնորհակալութիւն: Կը մաղթեմ որ եռանդդ ու աւինդ անսպառ ըլլայ, արեւդ շատ ըլլայ եւ Դուն բախտն ունենաս տեսնելու եւ տօնելու Յիսնամեակը ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ-իդ: Մի թերահաւատիր, Աստուած, որ տէրն է կեանքի եւ ժամանակներու, կարող է 25 տարի ալ պարգեւել եւ պճնել վաստակաւոր ճակատդ Ոսկի Յորելեանի պսակով, որուն վրայ, իբրեւ թանկագին ակունքներ, ընդելուզուած ըլլան ՏԱՐԵՑՈՅՑ-ներուդ 50 տարուան հատորները:

Մնացեալ 27 հատորներէն 20-ը տեղաւորեցի, 7-ը վրաս կը մնան տակաւին: Որու որ կը ներկայացնեմ, կը մերժեն, գինը շատ թանկ գտնելով: Պիտի աշխատիմ անշուշտ ատոնք ալ ձեռքէ հանել:

Մաղթելով լիակատար յաջողութիւն եւ սիրալիր ողջոյններով,

Աղօթանուէր

ԼԱ.

THÉOTIG

(Impr. MASSIS)

208 bis., Rue Lafayette,

Paris (10). FRANCE

Փարիզ, 20 դեկտ. 1927

Գերաշնորհ

S. Մեսրոպ Եպսկ. Նշանեան

Երուսաղէմ

Սիրելի Սրբազան Հայր,

Անհուն հաճոյքով ստացայ իրարու ետեւէ դեկտ. 7 թուակիր նամակնիդ եւ ուրիշ մըն ալ, լի՝ 29ի հատորիս գրական բաժնի զարդ Խրիմեան Հայրիկի պատմական թղթակցութեանց պատճեններով¹²⁹, որոնց համար ի՛նչքան շնորհակալ ըլլամ Ձեզ՝ նորէն քիչ է: Շա՛տ ապրիք եւ Աճ հեռի պահէ զՁեզ երբեմն զՁեզ տանջող գլխու ցաւէն: Պիտի օգտուիմ նաեւ

¹²⁷ Անկլիքան Եկեղեցոյ հոգեւոր պետը:

¹²⁸ Նկատի ունի Երուսաղէմի եկեղեցական օրացոյցը, զոր կը պատրաստէր ինք՝ Մեսրոպ սրբազան:

¹²⁹ 1929ի տարեցոյցին մէջ հրատարակուած են Խրիմեան Հայրիկի նամակները տողթ. Յ. Թիրեաքեանի (գրուած Երուսաղէմէն) եւ Կլատսթոնի (էջ 431-39): Դըժբախտաբար հրատարակուած չեն Գրիգոր Արծրունիի, Նարիման խանի ու Սուքիաս վրդ. Պարոնեանի ուղղեալ Հայրիկի նամակները, որոնց պատճենները ղըրկուած էին Մեսրոպ սրբազանի կողմէ, 7 Դեկտեմբեր 1927 թուակիրով:

պատկերներէն: Բայց ո՞րքան որ աշխատակիցներու շարքին՝ դուք ամէնէն *համարաթ*¹³⁰ կը փրօթիք ամէն տարի, չգիտնա՞ք որ օձիքնիդ ազատած կ'ըլլաք այսչափով: *Ձեր սիրուած ստորագրութիւնը կրող յօդուածի մըն ալ* ակնդէտ պիտի մնամ մինչեւ գարուն: Նիւթին ընտրութիւնը Ձեր կիրթ ճաշակին կը թողում, բաւ է որ Ծնունդի ծիսական Ձեր յոգնութիւններէն անմիջապէս վերջ՝ մուտ գործէք Ձեր վանուց ձեռագիրներու հարուստ դիւանէն ներս, դեռ եւս լոյս աշխարհի չեկած յիշատակարան մը եւն. երեւան հանելով եւ անոր կցելով պատմական ծանօթութիւններ մը, ինչպէս եւ այդ յիշատակարանէն էջի մը լուսանկարումը: Այսչափը կը համարձակիմ թելադրելու, ա՛յն պարագային համար միայն, երբ դժուար ըլլայ Ձեզ՝ երկարաշունչ նիւթի մը պրպտումը:

*Ս. Պատրիարք Հօր «նուրբ եւ անուշիկ ժպիտ»էն ցուք մը իմ վրաս ալ ցաթածի պէս եղաւ, երբ կարդացի Ձեր տողերը: Այդ *ժպիտ*էն «բարեացական արտայայտութիւն» իմաստը հանել միայն չի բաւեր, ցորչափ արդիւնք մը չկայ մէջտեղ: Վստահ եղէք, Սրբազան Հայր, որ մահո՛ւ չափ պիտի տրտմիմ, եթէ *ժամանակին* չստանամ Ն. Ամենապատուութենէն քերթուած մը եւ Հայկական բաժնիս յատուկ բանասիրական մը: Ասոնց տիրացումո՛վս է միայն, որ «ճիտիկս ծուռ» մնալէ պիտի դադրի: Ինք աղէ՛կ գիտէ այս պարագան, ու 29ի հատորս իր սիրելի ստորագրութեան երեւումո՛վ միայն կրնայ պարծիլ մանաւանդ, երբ ամայութիւն է չորս դիս: Ուղղակի չեմ գրեր իրեն, վախով որ՝ բազմազբաղ՝ չի պատասխաներ, մանաւանդ որ «լեռան պէս» Մեսրոպ Սրբազան մը ունիմ հող՝ իբր բարեխօս ու միջնորդ առ Ս. Պատր.:

*27 օրինակներէն 20 հատին իսկոյն տեղաւորումն ալ՝ ուրիշ անետիս մը ինծի: Ականջ կախելու չէ «գինը թանկ է» առարկողներուն, այլ Ձեր «շուք»ին ծանրութիւնով ամչցնելու է զանոնք: Մնաց որ թելերնիդ երկայն է, կրնայ տարածուիլ մինչեւ Բեթլեհէմ, Յոպպէ եւ այլուր՝ մնացեալին «կնքում»ին ի նպաստ, եթէ արդէն կնքուած իսկ չէ այդ մնացեալը: Հիմա գիտէք, Սրբազան Հայր, թէ հոս ուրիշ ո՛չ մէկ զբաղում ունիմ՝ սակաւապէտ մարդու ապրուստս ապահովող, բաց ի գրչիս արդիւնքէն: Բնաւ չեմ յուսահատիր, թէ այդ արդիւնքը բաւարար չըլլար ինծի, ցորչափ գործս գնահատող եւ զայն տարածող անձեր ունիմ հոս ու հոն: Ի՞նչ ամօթ բան՝ սա ազգին համար, որ քիչ շատ արժէք եւ օգուտ ներկայացնող հեղինակի մը երկասիրութեան չ'ուզեր ընծայել բաղձացուած ընդունելութիւնը, եւ ազդեցիկ անձնատրութեանց դրդումո՛վը միայն կը բարեհաճի գնել զայն...: Եւ այս՝ -իմ մասիս խօսելով- 22 տարիէ ի վեր:

*Հոդ լուսանկարիչ-գեղագիր Հայ մը կայ՝ որ ինծի նամակ էր գրեր ասկէ ամիսներ առաջ, Ձեր յանձնարարական-քարտով: Բարի եղէք իրեն ըսելու, թէ պատասխան-քարտովս իրմէ ուզած պատկերներս չուշացնէ, ի մասնա-

¹³⁰ Ժրաջան, գործունեայ (թրք.):

տրի Ս. Պատրիարք Հօր լուսանկարը, վեղարը գլխուն, ասա ի ձեռին եւ աթոռի վրայ բազմած, վասն զի պիտի դնեմ զայն 29ի հատորիս սկիզբը, hors texte¹³¹, ինչպէս ըրած էի 28իս մէջ Վեհափառինը: Շատ գոհ պիտի մնայի, եթէ այդ պատրաստելիք պատկերին *Ֆօնը քեռի*¹³² ըլլար. ան կը հասկնայ: Իսկ եթէ յիշեալը չկարենայ պատրաստել, Ձենէ կ'ուզեմ զայն անպայման:

*Սրբազան Հայր, յառաջիկայ 1928 տարւոյ նախամիսէն սկսեալ՝ մէկ կողմէ շարել պիտի սկսինք 29ի հատորս, քչիկ քչիկ գործը յառաջ տանելու համար: Գիտէք թէ նախամասը կը կազմէ «Հայկ[ական] Օրացոյց»ը՝ նոր տոմարաւ, զոր Բաբգէն Ս.է խնդրած էի կրկին: Ներփակ է Ն. Սրբազնութեան ուղղեալ Բ. խնդրագիրս: Դո՛ւք ալ կրկնէիք իրեն, որ չուշացնէր ձեռագիրը: Եթէ ուշացնէ, խաղբին դուռը կը հասնիմ իրաւ որ...:

*Բաւ համարելով այսքան տարապարհակներ ու թուումս, կը փոխադարձեմ սրտագին բարեմաղթութիւններս՝ ամանորի եւ Ս. Ծննդեան առթիւ, ու կը մնամ Ձերդ մշտանոյն սիրով՝

Թէոդիկ

ԼԲ.

THÉOTIG
(Impr. MASSIS)
208^{bis}. RUE LAFAYETTE
PARIS (10^E). FRANCE

Փարիզ, 26-12-27

Գերաշնորհ
Տ. Մեսրոպ Եպս. Նշանեան

Երուսաղէմ

Կը հաստատեմ ամսոյս 20 թուակիր վերջին նամակս: -Քանի մը օր վերջ էր որ ստացայ Բաբգէն Ս.ի *օրացոյցի* ձեռագիրն ու նամակը, եւ սիրտս հանգստացաւ: Ն. Սրբազնութիւնը խոստացած էր նաեւ աշխատակցիլ 29ի հատորիս՝ բոլորովին «նորութիւն» եղող յօդուածով մը¹³³: Տարօսը Մեսրոպ Սրբազանիս, որ ասանկ հաճոյալի խոստում մը գլտորցնէ ինձ համար:

* Ասկէ ամիսներ առաջ խնդրած էի Ձենէ՝ ունենալ նորոգ հանգուցեալ Սիմոն ծ. վրդ. Թեւեանի լուսանկարը: Արդեօք կարելի՞ է զայն հայթայթել ինձ համար:

¹³¹ Բնագրէ դուրս (լուսանկար, ֆր.):

¹³² Perdu (ֆր.): Կը խնդրէ, որ խորապատկերը չերեւի, ըլլայ աներեւոյթ:

¹³³ Բացի օրացոյցի պատրաստութենէն Բաբկէն եպս. Կիւլեսէրեան 1929ի տարեցոյցին աշխատակցած է «Մեկնութիւն տոմարական բառերու» խորագրով գրութեամբ (էջ 22-24):

* Սրբազան Հայր, Ս. Տեղեաց մէջ եթէ յիշատակութեան արժանի մահեր պատահին մերիններէն (իցի՛ւ թէ բնաւ չպատահին), բարի ըլլայիք ինձ հաղորդելու 1928ի ընթացքին:

* Խցիկիս կից է «Յառաջ»ի¹³⁴ խմբագրատունը՝ որուն հասցէին եկած բոլոր հայ թերթերէն կ'օգտուիմ գիշերները, իբրեւ բարի ժամանց: Ատոնցմէ մէկուն մէջ (ամերիկահայ) հետեւեալը կարդացի.-

«Գիւտ Ս. Գրային Նշխարաց.- Պաղեստինի Պէյսան քաղաքին մէջ գրտնուած են նորանոր նշխարներ՝ որոնք լոյս կը սփռեն Հին Կտակարանի մէջ յիշուած դէպքերու վրայ: Ատոնց մէջ կայ գոհաբերութեան սեղանին պատկանող աղիւս մը՝ որ կը յիշեցնէ Սամուէլի գրքին մէջ նկարագրուած պատարագի արարողութիւնները: Գտնուած են նաեւ հարիւրէ աւելի ցելսէ շինուած սիկարի ձեւով առարկաներ՝ որոնք կը նմանին Ողբ Երեմիայի 7րդ գլխուն մէջ ակնարկուած կարկանդակի ու հացի փոքր կտորներուն: Պեղումներու ատեն գտնուած են ոսկի գոհարեղէններ եւ պրոնզէ արձանի մը վերնամասը որ Հաթորի (?) գլխուն կը նմանի, եւ որ կարծել կու տայ թէ եգիպտ. բանակ մը եղած է Պէյսանի մէջ 1400ին Ն.Ք.: Գտնուած են նաեւ մէկ քանի քարէ կշիռներ, նկարազարդ հողամաններ եւն.: Ատոնցմէ մասնաւոր հետաքրքրութեան արժանացած է կուժ մը՝ վրան օձի պատկերով, ինչ որ կը հաստատէ այն իրողութիւնը թէ Ամէնֆիս Գ.ի, Ռամսէս Բ.ի թագաւորութեանց օրով օժապաշտութիւնն ընդհանրացած էր ամէնուրեք: Այս բոլոր առարկաները գտնուած են 1500ին Ն.Ք. իշխող Թոթմէս Գ.ի նորագիւտ 2 մեհեանները պեղելու ատեն»:

Եթէ այս մասին նորութիւններ մը կցեք, ճարելով նաեւ այդ առարկաներէն (պեղօն) ոմանց լուսանկարները, շնորհապարտ թողուցած կ'ըլլաք զիս, վասն զի շատ թանկագին են տարեցոյցիս գեղար[ուեստական] բաժնին համար, ինչպէս, զոր օրինակ վերջերս Ուրի մէջ (Քաղդէաստան) -արդեօք Ուրիա՞ կամ Ուռիա՞, կամ Ուրֆա՞- երեւան հանուածները՝ որոնց պատկերները ճարեցի «Թայմզ»էն¹³⁵:

Մի՛, Սրբազան Հայր, պոստէք յօնքերնիդ, «էյ էրկա՛ն ըրիր, Թէոդիկ» ըսելով: Արդէն չե՛մ ալ յուսար որ այսպէս մենախոհեք, քաջ գիտելով գործիս հանդէպ Ձեր բարեացակամ վերաբերմունքը:

Ձերդ խ.ծ.

Թէոդիկ

Յ. Գ.- Պաղեստինի դրոշմակները փոխուեր են: Արդեօք կրնա՞մ ունենալ ատոնց *սէղին*: Զակիս համար է: Ձեզ համար այս բանն ալ դիւրի՞ն է արդեօք:

¹³⁴ Փարիզի մէջ, 1925-2009ի միջեւ հրատարակուած օրաթերթ: Հիմնադիր-խմբագիրն էր Շաւարշ Միսաքեան, որմէ ետք խմբագրի պաշտօնը ստանձնած է իր դուստրը՝ Արփիկ Միսաքեան:

¹³⁵ Այս մասին տե՛ս՝ 1929ի տարեցոյցը, էջ 268-84:

ԼԳ.

Երուսաղէմ, 10 Փետրուար 1928

Սիրելի Պր. Թէոդիկ,

Ծիսական ու դպրոցական, վարչական ու տպարանական բազմաթիւ ու բազմապիսի զբաղումներու¹³⁶ մէջէն հազիւ այսօր ժամանակ կը գտնեմ Ձեր անցեալ Դեկտեմբեր 20 եւ 26 թուակիր նամակներուն պատասխանելու: Ուզեցի մանաւանդ ՏԱՐԵՅՈՅՑ-ներու վաճառումը ասարտելէ ետք գրել Ձեզ:

ՏԱՐԵՅՈՅՑ-ներու 25 հատը միայն կրցայ տեղաւորել, մնացած 2-ը ես գնեցի ու նուիրեցի բարեկամներու: Հետեւապէս կը պահանջէք 27 օրինակ-ներու արժէքը. ամէն մէկը 8-ական Շիլինէն, ընդամենը 216 Շիլին: Այս գումարին փոխարէն կը ներփակեմ չէք մը Ձեր հրամանին, Լոնտոնի Պանք Օթոմանին վրայ, այսօրուան թուականով, թիւ 327045 / 50582: Հաճեցէք գանձել ու մեր հաշիւը փակել:

Նամակիս հետ կը ստանաք նաեւ մեր պատուական ու պաշտելի Սրբազանին նորագոյն լուսանկարը. քանի մը օր առաջ քաշուած յատկապէս Ձեզի համար: Ես Նորին Ամենապատուութեան գլխուն վերեւ կեցայ ու ստիպեցի նկարուիլ, դիրքն ու ամենայն ինչ ճշդելով: Շատ ուրախ եմ որ Սրբազանը բարեհաճեցաւ հաւանիլ, միմիայն սրտիկդ չկոտրելու ու ճիտիկդ ծուռ չձգելու գերազնիւ հոգաճութեամբ: Լուսանկարը կը կարծեմ թէ յաջող ելաւ ու ճիշդ Ձեր թելադրածին ու փափաքածին համաձայն: Դիրքը վայելուչ է ու արտայայտութիւնը բնական ու անուշիկ: Դէմքին վրայ շեշտուած է իրեն յատուկ խորունկ ու աղու նայուածքը: Նկարողն է մեր բարեկամ Տիար Արամ Խաչատուրեան գեղարուեստագէտը: Սրբազան Հայրը Ձեզ հանդէպ այսչափ բարեացականութիւն ցուցնելէն ետք չեմ տարակուսիր թէ Ձեր կողմէ ակնկալուած գրութիւն մըն ալ պիտի հաճի ղրկել: Կը թելադրեմ որ անգամ մըն ալ Դուք յիշեցնէք ուղղակի:

Իսկ այս տարի կարծեմ թէ պիտի չկրնամ իմ աշխատակցութիւնս բերել: Սրբազան Պատրիարքը անանկ գործ մը փաթեց գլխուս որ աչք վերցնելու ժամանակ չեմ ունենար կոր: Իմացած էք անշուշտ թէ մեր քով կայ ԵՐՈՒՍԼԱՂԷՄԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ մը, ձեռագիր, պատրաստուած Տիգրան Սաւալանեանի¹³⁷ կողմէ, գրաբար լեզուաւ: Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար այդ ձեռագ-

¹³⁶ Մեսրոպ սրբազան 1911էն սկսեալ ստանձնած էր Երուսաղէմի դպրոցներու տեսչութիւնը, 1913ին դարձած էր տպարանի տեսուչ, 1922ին ընտրուած էր լուսարարապետ, իսկ 1925ին՝ Տնօրէն ժողովի ատենապետ:

¹³⁷ Պատմաբան, բանասէր ու թարգմանիչ, ծնած 1821ին, Իզմիր: Կրթութիւնը ծնընդավայրին մէջ ստանալէ եւ հոն միջոց մը ուսուցչութիւն ընելէ ետք, Կիրակոս պատրիարքը 1849ին զինք որպէս ուսուցիչ կը հրափրէ Երուսաղէմ, ուր իրեն կը յանձնուի տպարանի տեսչութիւնը, միջոց մը ետք ալ պատրիարքարանի քարտուղարութիւնը: Սիոնի խմբագիր ալ կ'ըլլայ: 1878ին վերջնականապէս կը վերադառնայ

րի տպագրութեան ծախքը վրան առած է: Որպէսզի գիրքը ամէնուն մատ-
 չելի ըլլայ, Պատրիարք Սրբազանը որոշեց որ աշխարհաբար հրատարակ-
 ուի, ու ինծի հրամայեց որ թարգմանութիւնը կատարեմ¹³⁸: Ես ալ հնազան-
 դութեան պարտուց դէմ չմեղանչելու համար յանձն առի այդ աշխատութիւ-
 նը, որ տարիէն աւելի պիտի տեւէ ու ամբողջ տրամադրելի ժամանակս պի-
 տի խլէ: Ձեռագիրը 1500 ընդարձակ էջերէ կը բաղկանայ: Արդէն սկսած եմ
 թարգմանութեան ու այսօր երրորդ ֆօրման մամուլը կը ձգուի: Հիմա չորս
 գրաշար ունինք: Ձեռագիրը մէջերնին կը բաժնեն ու անմիջապէս կը հալեց-
 նեն կոր: Պէտք է ետեւէն ձեռագիր հասցնել: Ատոր համար գիշերը ցորեկին
 խառնած կ'աշխատիմ: Ուստի կալ զիս հրաժարեալ: Աստուած Ձեզ ալ, ինձ
 ալ կեանք պարգեւէ, յառաջիկային առիթ կ'ունենանք աշխատակցելու: Այս
 բանաւոր պատճառաւ պիտի չկրնամ դարձեալ Ձեր յիշած Պաղեստինեան
 հնութիւններով հետաքրքրուելու: Ներողամիտ եղէք:- Հանգուցեալ Սիմէոն
 վարդապետի նկարը եթէ ձեռք անցնելու ըլլամ, կը փութամ դրկել:

Սիրոյ ողջունիւ եւ յաջողութեան մաղթանքներով, մնամ միշտ
 Բարեացակամ ու Աղօթանուէր

ԼԴ.

THÉOTIG
 (Impr. MASSIS)
 208^{bis}., RUE LAFAYETTE,
 PARIS (10^E). FRANCE

Փարիզ, 2 Մարտ 1928

Գերաշնորհ
 Ս. Մեսրոպ Եպս. Նշանեան

Երուսաղէմ

Ի ձեռին ունիմ Փետր. 10 թուակիր նամակնիդ՝ ներփակ £10.16-նոց չէ-
 քով, իբր փոխարժէք 28ի 27 հատորներու: Անհուն շնորհակալութիւն Ձեր
 բարեացակամ վերաբերմունքին համար՝ որ աւանդական դարձած է այլ ե-
 ւրս: Շա՛տ ապրիք՝ առանց գլխու ցաւի, որպէս զի իմինիս պէս... «գլխացա-
 ւեր» կարենաք տանիլ:

Մեր «պատուական ու պաշտելի Սրբազան»ին նորագոյն լուսանկարն ալ
 ստացայ: Կը գրէք. «Դիրքը վայելուչ է, եւ արտայայտութիւնը՝ բնական ու ա-
 նուշիկ» եւ դեռ կարգ մը շատ յատկանշական ու ճիշդ տողեր՝ զորս ճոխա-
 ցուց արդէն, իր կարգին, իմ կարօտագին ականարկս: Ա[ստուա]ծ չար աչքէ

Իզմիր, ուր կը վարէ *Արշալոյս Արարարեանի* խմբագրութիւնը: Կը մեռնի Իզմիր, 1901ին: Իր կարեւոր աշխատութիւններն են *Պատմութիւն Երուսաղէմի*, Ս. Յակոբ-
 եանց մատենադարանի ձեռագրաց ցուցակը են.:

¹³⁸ Սաալանեանի *Պատմութիւն Երուսաղէմի* աշխատութիւնը, որ Մեսրոպ Եպս. Նշանեանի կողմէ գրաբարէ աշխարհաբարի վերածուած էր, երկու հատորով ու ճոխ յաւելուածով պիտի հրատարակուէր 1931ին, հանգուցեալ Պօղոս փաշա Նու-
 պարի մեկենասութեամբ:

պահէ Ն. Ամենապատուութիւնը, զի մի՛ գուցէ մղեղ իյնայ գուրգուրացեալ աչքին մէջ:- Ն. Ամենապատուութիւնը ո՛չ միայն տարեցոյցիս սիրուն բազմած եղաւ իր Աթոռին վրայ, այլ եւ բարեհաճեցաւ գրիչ շարժել ու ինձ ուղարկել ուզածներս¹³⁹: Աղօթքս անպակաս է Իրեն համար. եւ ի՞նչ աղօթք, անբարբառ ու երկնապիշ «հի՛ւ» տէրվիշեան:

Ն. Ամենապատուութեան կողմէ Ձեր «գլխուն փաթառած գործը» արժան է որ տանիք, որպէս զի ճոխանայ Հայ Պատմութիւնը: Ա[ստուա]ծ կարողութիւն եւ առողջութիւն պարգեւէ Ձեզի ու Ձեր ժիրաժիր կարգակիցներուն՝ որոնք մտաւորական վառ հնոց մը դարձնելու վրայ են Ս. Աթոռը:

Ձերդ անայլայլ սիրով ու կարօտով՝
Թէոդիկ

34 LETTERS EXCHANGED BETWEEN ARCHBISHOP MESROB NESHANIAN AND THEOTIG

(1925-1928)

DEACON SEVAN DEYİRMENJİAN (haygazian@gmail.com)

Archbishop Mesrob Neshanian (1872-1944) assumed many important duties, including the directorship of the Manuscript Library in the Armenian Patriarchate of Jerusalem, and eventually became the Patriarch of the Armenian Patriarchate of Jerusalem. Known to literary and historical circles for publishing the chronicles of Eremya Chelebi Kōmürjian (1637-1695) and Grigor Daranaghtsi (1576-1643) and the correspondence of important figures from the 17th and 18th centuries, Neshanian also draws attention with the materials he provided from the patriarchate archives to intellectuals of the period like Theotig (1873-1928), the publisher of the renowned *Amenun Daretsuytse* yearbook.

The letters published in the article for the first time, offer important insights on the period, including the dream Theotig had to go to Jerusalem, live in the St. James Armenian Monastery, and do research in its rich archive and library.

Furthermore, these letters complement an initial set of letters published in the *Haigazian Armenological Review*, back in 2006 by Dr. Vatche Ghazarian (pp. 263-96). In these letters Theotig diligently and persistently asks Fr. Neshanian in a very modest and courteous way to provide him with both research as well as literary materials of his, alongside archival materials from the rich collection of the Patriarchates archive. The letters give insight on the efforts that Theotig writings made to offer interesting and up-to-date materials to the readers of his yearly publication, *Amenun Daretsuytse*.

¹³⁹ 1929ի տարեցոյցին մէջ եղիշէ արք. Դուրեան պատրիարքէն հրատարակուած է անստորագիր քերթուած մը՝ «Ուխտատրութիւն մը դէպի Երազմոյն» խորագրով, էջ 458-63 (Սեւան Տէյրմենճեան, «Թէոդիկի նամակները եղիշէ արք. Դուրեանին», *Սիոն*, 1-2-3:2025, մամուլի տակ):